Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն.

Գեղարքունիքի և Ծիրակի մարզերի օրինակը

Հետազոտող հեղինակներ՝
Մարիամ Խալաթյան,
Նվարդ Մարգարյան

Օգնական՝
Ագապի Իվանյան

Սրբագրումը՝
Ազնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝
Նորա Գալֆայանի

Հետազոտությունը կատարվել է «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության» ծրագրի շրջանակում, որն իրականացնում են ՕքսԵՋԵն հիմնադրամը, «Սոցիոսկոպ», «Ասպարեզ» լրագրողների ակումբ, «Հայ առաջադեմ երիտասարդություն», «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ. Հայաստան» հասարակական կազմակերպությունները «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը:

Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Հետազոտության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Եվրոպական միության և ծրագրում ընդգրկված մյուս կառույցների դիրքորոշումների հետ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

oxYGen

ՍՈՑԻՈՍԿՈՊ
SOCIOSCOPE

Բովանդակություն

Ներածություն **4**

Հետազոտության մեթոդաբանական շրջանակ **8**

Զբաղվածության հիմնախնդիրները **12**

Աշխատանքի ընդունման պրակտիկաները և զբաղվածության փորձառությունը 15

Զբաղվածության հարցերը և աշխատանքի ոլորտում խնդիրները 21

Պետության դերն ու անելիքը զբաղվածության կարգավորման գործում 31

Աղքատության և զբաղվածության փոխառնչությունները **38**

Աղքատություն և աղքատներ. սահմանումներ և ընկալումներ 38

Աղքատության հաղթահարումը և խոչընդոտները 45

«Զբաղված աղքատություն» 56

Բարեկեցության հարցը. բարեկեցիկ քաղաքացու ընկալումները **61**

Ամփոփում **67**

Առաջարկություններ **71**

Ներածություն

Աշխարհում աղքատ բնակիչների մեծ մասը զբաղված է, ինչը նշանակում է, որ նրանք աշխատում են իրենց կենսապայմաններն ապահովելու համար, սակայն չեն ստանում այնքան եկամուտ, որը կբավականացնի գոնե նվազագույն մակարդակում իրենց հիմնական կարիքները հոգալուն: Սա հիմնախնդիր է, որը բնորոշ է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներին: «Զբաղված աղքատներ» եզրույթը նոր է և քիչ է կիրառվում. գրականության, քաղաքականությունների մեջ առավել հաճախ հանդիպում ենք «աղքատ» եզրույթին, քանի որ «զբաղված», «զբաղվածություն» հասկացություններն ընկալումների մակարդակում արդեն իսկ բարեկեցության բնութագրիչ են[1]: Այնուհանդերձ, սա կարևոր հասկացութային տարանջատում է խնդիրն առավել խորքային հասկանալու և դրա հաղթահարման համար առաջարկություններ մշակելու համար:

«Զբաղված աղքատության» հիմնախնդիրն այսօր բավականին տարածված է և վերջին տարիներին նաև հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Երևույթը սահմանելու համար ԱՄՆ-ում հաճախ կիրառվում է «աշխատող աղքատներ» (working poor) եզրույթը, եվրոպացի հետազոտողներն օգտագործում են «աշխատանքային աղքատություն» (in-work poverty) եզրույթը[2]: «Աշխատող/զբաղված աղքատ» է այն մարդը, որն աշխատում է և աղքատ է[3]:

Գաղափարը, թե աշխատող աղքատները հիմնականում, այսպես կոչված, «լիբերալ» տնտեսություններում են ներգրավված, և դա հետևանք է հստակ կազմակերպված աշխատուժի և համապատասխան կարգավորումների բացա-

1 | Lohmann, H. & Marx, I. (Ed.) (2018). *Handbook on In-Work Poverty.* Elgar online. https://doi.org/10.4337/9781784715632

2 | Նույն տեղում:

3 | Նույն տեղում:

կայության, վիճելի է: Եվ քանի որ աշխատող աղքատների ֆենոմենը տարածված է ամբողջ աշխարհում, ընդ որում՝ զարգացած և հարուստ երկրներում[4], հետևաբար աշխատանքային աղքատությունը գլոբալ հիմնախնդիր է: Բազմաթիվ եվրոպական երկրներ ընդունում և սահմանում են այս երևույթը որպես հիմնախնդիր, քայլեր են ձեռնարկում դրա հաղթահարման համար, ինչպես, օրինակ՝ խելամիտ նվազագույն աշխատավարձիամրագրումն այնքան, որն աշխատողին հնարավորություն կտա հոգալու իր և իր ընտանիքի հիմնական կարիքները, դիմակայելու սոցիալական և տնտեսական ցնցումներին[5]:

Իհարկե, կարևոր է, որ «աշխատանքային աղքատությունը» որպես հիմնախնդիր արդեն իսկ ձևակերպված է բազմաթիվ երկրների կառավարությունների կողմից, որոնք քայլեր են ձեռնարկում սրա հաղթահարման ուղղությամբ, սակայն, մյուս կողմից, մեծագույն խնդիր և խոչընդոտ են երևույթի էության վերաբերյալ սահմանափակ պատկերացումները: Այդպիսի պատկերացում է այն, որ աղքատությունը հնարավոր կլինի կրճատել, եթե ցածր աշխատավարձերը բարձրացվեն, կամ ոչ համարժեք աշխատավարձերը կարգավորվեն: Իհարկե, այս ձևակերպումները մասամբ ճիշտ են, սակայն ապակողմնորոշիչ են, և աշխատավարձը աղքատության սահմանման միակ չափորոշիչը չէ[6]: Որպես օրինակ՝ ընտանիքում արժանապատիվ աշխատավարձ ստացողը կարող է դառնալ աշխատող աղքատ, եթե ընտանիքում միակ եկամուտ ստացողն է և նրա խնամքի տակ կան երեխաներ: Համաձայն նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տվյալների՝ միայն աշխատանք ունենալու պայմանը տնային տնտեսություններին չի պաշտպանում աղքատության ռիսկից[7]: Ավելին, նույն ԱՄԿ տվյալների համաձայն, զարգացող երկրներում աշխատողների/զբաղվածների երկու երրորդն ապրում է ծայրահեղ կամ միջին աղքատության պայմաններում[8]: 2018 թվականի տվյալներով՝ աշխարհում աշխատանք

4 | Hick, R., Marx, I. (2022). *Poor Workers in Rich Democracies: On the Nature of In-Work Poverty and Its Relationship to Labour Market Policies.* IZA Institute of Labor Economics. https://docs.iza.org/dp15163.pdf

5 | Նույն տեղում:

6 | Թեև ճիշտ է նաև այն հանգամանքը, որ աշխատավարձը աղքատության սահմանման հիմնական չափորոշիչներից է:

7 | Սահակյան, Մ., Կարապետյան, Լ. (2021). *Աշխատանք և սոցիալական արդարություն: Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում.* Friedrich Ebert Stiftung. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/17944-20210722.pdf

8 | International Labour Office. (2017). *World Employment Social Outlook: trends 2017,* Geneva.

ունեցող/զբաղված անձանց 8%-ն ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում, իսկ աշխատանք ունենալու և աղքատության կրճատման հարաբերակցությունն ուղիղ չէ և դեռևս խնդրահարույց է[9]: Հետարդի (պոստմոդեռնիստական) հասարակություններում աշխատաշուկայի բնորոշումներից են աշխատավարձերի անհավասարությունը, նվազագույն և առավելագույն աշխատավարձերի միջև հսկայական ճեղքվածքը, և նրանց համար, ում եկամուտը նվազագույն աշխատավարձի կամ դրան մոտ տիրույթում է, աշխատանք ունենալը դեռևս աղքատ չլինելու հոմանիշ չէ[10]:

«Զբաղված աղքատների» խնդիրները բավական երկար ժամանակ է, որ հետազոտության առարկա են: Սակայն զարգացած և հարուստ համարվող երկրներում «զբաղված աղքատության» հիմնախնդիրը միայն վերջերս է դարձել հետազոտության առարկա, քանի որ այն, սովորույթի համաձայն, զուգորդվել է արտադրական աշխատատեղերի քանակի նվազման հետ կամ ցածր վարձատրվող, ոչ անվտանգ աշխատատեղերի (ենթադրյալ) աճի հետ ծառայությունների մատուցման ոլորտում, որոնք հաճախ սահմանվում են որպես, այսպես կոչված, «Մակդոնալդային աշխատանքներ[11]»: Այսինքն՝ հետարդի հասարակություններում աշխատաշուկայի բնորոշումներից են աշխատավարձերի անհավասարությունը, նվազագույն և առավելագույն աշխատավարձերի միջև հսկայական ճեղքվածքը, և նրանց համար, ում եկամուտը նվազագույն աշխատավարձի կամ դրան մոտ տիրույթում է, աշխատանք ունենալը դեռևս աղքատ չլինելու հոմանիշ չէ[12]:

Գործազրկությունն ու աղքատությունը Հայաստանում սերտորեն փոխկապակցված են[13]: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ աղքատության վրա ազդող կարևորագույն գործոն է մասնակցությունն աշխատանքի շուկայում: Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը: Ըստ ՀՀ վիճակագրա-

9 | International Labour Office. (2019). *The working poor or how a job is no guarantee of decent living conditions.* Retrieved from: https://shorturl.at/iEOUX

10 | Banoli, G. (2007). "Time Matters: Postindustrialization, New Social Risks and Welfare State Adaptation in Advanced Industrial Democracies," *Comparative Political Studies 40 (5)*, 495-520.

11 | Espring-Andersen, G., Gallie, D., Hemerijck, A., and Myles, J. (2002). *Why We Need a New Welfare State,* Oxford: Oxford University Press

12 | Banoli, G. (2007). "Time Matters: Postindustrialization, New Social Risks and Welfare State Adaptation in Advanced Industrial Democracies," *Comparative Political Studies 40 (5)*, 495-520.

13 | Համաշխարհային բանկ. (2014). *Ակտիվացում աղքատության կրճատման համար. Հայաստանի սոցիալական ապահովության համակարգի ներուժի օգտագործումը.* վերցվել է՝ https://shorturl.at/qxLOY

կան կոմիտեի հրապարակումների՝ աղքատների մեծ մասը չի ունեցել/չունի աշխատանք, մինչդեռ ոչ աղքատների զգալի մասը զբաղված է եղել/զբաղված է որևէ տեսակի տնտեսական գործունեությամբ[14]:

14 | ՀՀ վիճակագրական կոմիտե. (2021). *Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020 թթ., մաս 1.* վերցվել է՝ https://shorturl.at/yzGOR

Աղյուսակ 1. Հայաստան. աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2020 թ. (15-75 տարիքի բնակչություն) (տոկոսներով)

Տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակը	2020 թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ոչ ոք զբաղված չէ	1.7	26.8	9.5	9.0
Զբաղված է 1 անդամ	0.8	20.0	17.9	22.8
Զբաղված է 2 անդամ	0.3	23.3	34.3	37.6
Զբաղված է 3 և ավելի անդամ	0.7	31.9	38.3	30.6
Ընդամենը	**0.7**	**25.5**	**100**	**100**

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020 թ.[15]:

15 | Նույն տեղում:

Վերոնշյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից տեսնում ենք, որ այո՛, աշխատանք ունենալն ու զբաղվածությունն ազդում են աղքատ չլինելու վրա, սակայն նույնիսկ զբաղվածության պայմաններում շատերը շարունակում են լինել ծայրահեղ աղքատ, աղքատ:

Հայաստանում «զբաղված աղքատներ», «աշխատող աղքատներ», ինչպես նաև «աշխատանքային աղքատություն» երևույթները համակողմանի ուսումնասիրված չեն, հետազոտություններն ու վիճակագրական տվյալները թեմայի առնչությամբ սակավ են: Ուստի այս հետազոտությունը մի փոքր քայլ է՝ հասկանալու հայաստանյան երկու մարզերում զբաղվածության և աղքատության, «զբաղված աղքատների» և «աշխատանքային աղքատության» հանրային ընկալումները, ինչպես նաև մշակելու առաջարկություններ, որոնք միտված կլինեն ոլորտային քաղաքականությունների լավարկմանը:

Հետազոտության մեթոդաբանական շրջանակ

«Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն. Գեղարքունիքի և Ծիրակի մարզերի օրինակը» հետազոտության նպատակն է հասկանալ զբաղվածության և աղքատության հանրային ընկալումները Հայաստանում աղքատության ամենաբարձր մակարդակն ունեցող երկու մարզերում: Հայաստանի ամենաաղքատ մարզը Գեղարքունիքն է, որտեղ աղքատության մակարդակը 2021 թվականի դրությամբ եղել է 49.1%: Հաջորդում է Ծիրակը՝ 46.9% ցուցանիշով, ընդ որում՝ 2020 թվականի համեմատ Ծիրակում աղքատության մակարդակն էապես բարձրացել է՝ 42.9%-ից դառնալով 46.9%[16]: Այս երկու մարզերում աղքատությունն անհամեմատ ավելի բարձր է մյուսներից, հետևաբար հետազոտության շրջանակում թիրախավորվել են հենց այս մարզերը:

Ուսումնասիրությունն իրականացրել ենք՝ որպես ուղենիշ ունենալով հետազոտական հետևյալ հարցերը.

- Ինչպիսի՞ փորձառություն ունեն մարդիկ Հայաստանում զբաղվածության ոլորտում. ի՞նչ խնդիրների են բախվել աշխատանք գտնելու գործընթացում:
- Ի՞նչ խնդիրներ կան Հայաստանում զբաղվածության ոլորտում:

16 | Հերգնյան, Ս. (2022). Հայաստանի բնակչության 26.5%-ը աղքատ է. ամենաաղքատը Գեղարքունիքն ու Ծիրակն են. hetq.am. վերցվել է՝ https://hetq.amhy/article /150676

- Ինչպիսի՞ն է պետության դիրքորոշումը զբաղվածության ոլորտում խնդիրների լուծման առնչությամբ. ի՞նչ անելիք ունի պետությունը:
- Ինչպիսի՞ն է մարդկանց շրջանում աղքատության ընկալումը:
- Ինչպե՞ս է զբաղվածությունը նպաստում աղքատության կրճատմանը:
- Որո՞նք են աղքատության հաղթահարման գլխավոր խոչընդոտները Հայաստանում, և ի՞նչ է անում պետությունը աղքատության հաղթահարման համար:
- Ինչպե՞ս են մարդիկ ընկալում բարեկեցությունը. ի՞նչ անելիք ունի պետությունը քաղաքացիների բարեկեցության ապահովման համար:
- Որքանո՞վ են ՀՀ պետական քաղաքականությունները հասցեագրում զբաղվածության, գործազրկության, աղքատության հաղթահարման համար հետազոտության մասնակիցների բարձրաձայնած կարիքներն ու խնդիրները:

Հետազոտության առաջին փուլում անցկացրել ենք փորձագիտական հարցազրույցներ աշխատանքային իրավունքների ոլորտի փորձագետների հետ՝ ներառելով մասնագետների ինչպես ՀՀ գործադիր մարմիններից, օրենսդիր մարմնից, այնպես էլ ոլորտում աշխատող հասարակական կազմակերպություններից: 2023 թ. հունվար-մարտ ամսիներին ընդհանուր առմամբ իրականացրել ենք 6 փորձագիտական հարցազրույց, որոնց ընթացքում շահագրգիռ կողմերի հետ փորձել ենք վերհանել, թե որոնք են Հայաստանում խոցելի խմբերը աշխատանքային իրավունքների համատեքստում, ինչ խնդիրներ կան աշխատանքային իրավունքների ոլորտում, որոնք հրատապ լուծման անհրաժեշտություն ունեն, որոնք են այն առաջնահերթությունները, որոնք պետք

է սահմանվեն աշխատանքային իրավունքների հրատապ խնդիրները հասցեագրելու համար, ինչպես նաև ինչ կարիքներ ունեն տարբեր ինստիտուտները աշխատանքային իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Փորձագիտական հարցազրույցներին զուգահեռ իրականացրել ենք աշխատանքային իրավունքների ոլորտում պետական քաղաքականությունների (ընդ որում՝ Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի նոր հայեցակարգը, Զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագիրը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և այլն), միջազգային կոնվենցիաների (ընդ որում՝ ԱՄԿ թիվ 131՝ Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիան, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան և այլն) և լավագույն պրակտիկաների, ոլորտում իրականացված տարբեր հետազոտությունների քարտեզագրում և երկրորդային վերլուծություն:

Փորձագիտական հարցազրույցների, գրականության ուսումնասիրության արդյունքում տեսնում ենք, որ աշխատանքային իրավունքների ոլորտներում բազմաթիվ են քաղաքականությունների բացերը, և կան շատ հարցեր, որոնք ունեն լրացուցիչ ուսումնասիրության կարիք: Այնուամենայնիվ, փորձագետները մեծ մասամբ բարձրաձայնում և խոսում էին զբաղվածության, գործազրկության և աղքատության հիմնահարցերի և դրանց հասցեագրման անհրաժեշտության մասին, ինչը նաև արդեն իսկ ներառված է տարբեր քաղաքականություններում: Այսպիսով, համադրելով փորձագիտական հարցազրույցների և երկրորդային վերլուծության արդյունքները, որպես հետազոտության առարկա ենք ընտրել Հայաստանում «զբաղված աղքատության» կամ «աշխատանքային աղքատության» խնդիրների ուսումնասիրությունը:

Հետազոտության շրջանակում իրականացրել ենք 4 ֆոկուսխմբային քննարկում Գեղարքունիքի մարզում (Ճամբարակ և Նորատուս համայնքներում) և Շիրակի մարզում՝ Արթիկ և Մարմաշեն համայնքներում: Հետազոտության թիրախ համայնքներն ընտրվել են ըստ Գեղարքունիքի և Շիրակի մարզպետարաններ ուղարկված հարցումներին ստացված պատասխանների: Ֆոկուսխմբային քննարկումներն իրականացրել ենք 2023թ. հունիս-հուլիս ամիսներին:

Ընտրանք

Մարզ	Համայնք	Տարիքային խումբ	Սեռ		Քանակ
			ար.	իգ.	
Գեղարքունիք	Ճամբարակ	30-44	5	5	1
Գեղարքունիք	Նորատուս	30-44	3	7	1
Շիրակ	Արթիկ	30-44	5	5	1
Շիրակ	Մարմաշեն	30-44	5	5	1
Ընդամենը			**18**	**22**	
			40 մասնակից		**4 ֆոկուս խմբային քննարկում**

Հետազոտական հարցերի շրջանակում, հասկանալու համար աղքատության և զբաղվածության փոխկախվածությունը, կարևոր ենք համարել որպես ֆոկուսխմբային քննարկման մասնակիցների ընտրության չափանիշ առանձնացնել տարիքը, աշխատանքի առկայությունը և կրթությունը:

Հետազոտության ընտրանքում տարիքային այս խմբին (30-44 տարեկան) ընդգրկել ենք՝ հիմք ընդունելով «Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում» հետազոտությունում ներառված տվյալները, համաձայն որոնց՝ 2018 թվականի դրությամբ ՀՀ-ում զբաղված աղքատների շրջանում ամենամեծ մասնաբաժինն ունեցել է հենց այս տարիքային խումբը՝ 38,2%[17]:

17 | Սահակյան, Մ., Կարապետյան, Լ. (2021). *Աշխատանք և սոցիալական արդարություն: Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում.* Friedrich Ebert Stiftung. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/17944-20210722.pdf

Զբաղվածության հիմնախնդիրները

ՀՀ Կառավարության տարբեր տարիների ծրագրերի, զբաղվածության քաղաքականությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ոլորտը մշտապես համարվել է երկրի սոցիալ-տնտեսական կայունության ապահովման առաջնահերթ ուղղություններից մեկը: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի[18], ինչպես նաև զբաղվածության ոլորտի քաղաքականությունների կարևորագույն նպատակներից է մի կողմից, տնտեսության կայուն զարգացման համար անհրաժեշտ աշխատուժի ձևավորումը, մյուս կողմից՝ աշխատուժի առաջարկի ներուժային և արդյունավետ իրացման համար պայմանների ապահովումը[19]: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը զբաղվածությունը սահմանում է որպես ՀՀ օրենքով չարգելված և ՀՀ զբաղվածության ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերով նախատեսված գործունեության տեսակներ, որոնք ներառում են.

- գործատուների մոտ վճարովի կամ վարձու աշխատանքային գործունեությունը՝ ներառյալ ՀՀ օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը՝ բացառությամբ այդ աշխատանքի դիմաց վարձատրություն չնախատեսող դեպքերի,
- ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների իրականացումը քաղաքացիաիրավական պայմանագրով,

18 | Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. *ՀՀ օրենքը զբաղվածության մասին*. վերցվել է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

19 | ՀՀ էլեկտրոնային կառավարում. *ՀՀ զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարություն*. վերցվել է՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voro shum/2012/11/MAR45-9.pdf

- անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեությունը,
- արտոնագրային վճար վճարողի գործունեությունը,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը,
- ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը[20]:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սահմանման՝ գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակառու չհամարվող և աշխատանք չունեցող այն քաղաքացին, որը, հաշվառվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության իր բնակության վայրը սպասարկող տարածքային կենտրոնում, ստացել է գործազուրկի կարգավիճակ[21]:

Գործազրկության մակարդակը աշխատաշուկայի իրադրությունն ամփոփող, հիմնական մարտահրավերների մասին տեղեկություն տվող առանցքային ցուցանիշ է: Համաձայն տարբեր ուսումնասիրությունների և զեկույցների՝ գործազրկության միջին մակարդակն աշխարհում 5.5% է[22]: ՀՀ-ում գործազրկության մակարդակը շարունակում է մնալ մտահոգիչ. 2021 թվականին այն եղել է 15%, ինչը թեև 2020 թվականի համեմատ նվազել է 3,2%-ով, սակայն դեռևս 4 անգամ մեծ է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համապատասխան ցուցանիշից[23]:

2020 թվականին Հայաստանում աշխատուժի մասնակցության մակարդակը եղել է 58.5%, ընդ որում՝ այստեղ էականորեն տարբերվում են ինչպես տղամարդկանց (69.3%) և կանանց (49.4%) ներգրավվածությունը, այնպես էլ քաղաքային և գյուղական համայնքների միջև բաշխվածությունը: Վեր-

20 | Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. *ՀՀ օրենքը զբաղվածության մասին*. վերցվել է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

21 | ՀՀ ԱՍՀՆ. *Ո՞վ է համարվում գործազուրկ և ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ գործազուրկի կարգավիճակ ստանալու համար*. վերցվել է՝ https://www.mlsa.am/blockpage/64

22 | Թադևոսյան, Զ. և այլք. (2023). *Կենսաթոշակային, աշխատանքի և զբաղվածությանքաղաքականությունները սոցիալական պետության ձևավորման համատեքստում*. Mlsa.am. վերցվել է՝ https://mlsa.am/storage/uploads/age/1700658725z53BuUmpanCi74ieU6wekEhM8GTYsgnTVmfSN398.pdf

23 | Նույն տեղում:

ջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբաղվածության մակարդակն ունի դրական միտումներ գյուղական համայնքներում, իսկ քաղաքային համայնքներում հակառակն է, հետևաբար այստեղ բարձր է գործազրկության մակարդակը: Աշխատանքային ռեսուրսների բաշխվածության տեսանկյունից կա էական բևեռացվածություն, և դրանց շուրջ 30%-ը բաժին է ընկնում մայրաքաղաքին: Չնայած նման բևեռացվածությանը՝ գործազուրկների շուրջ 41%-ը ևս բաժին է ընկնում Երևանին: Սա չի վերաբերում նաև մարզային համայնքներին, և աշխատանքային ռեսուրսների մեծ տեսակարար կշիռ ունեցող մարզերն առանձնանում են նաև գործազրկության մեծ մասնաբաժնով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում աշխատանքային ռեսուրսների գրեթե 70%-ը տեղաբաշխված է ՀՀ տարածքային միավորների 36%-ում[24]:

Հետազոտության իրականացման ընթացքում ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ մասնակիցների հետ խոսել ենք զբաղվածության ոլորտում մարդկանց փորձառության, աշխատանք գտնելու ընթացքում առկա խնդիրների, ինչպես նաև առհասարակ զբաղվածության ոլորտի խնդիրների մասին: Հետազոտության մասնակիցների պատկերացումները համադրելով՝ դուրս ենք բերել զբաղվածության ոլորտում պետության իրականացրած քաղաքականությունների, ծրագրերի և ծառայությունների շուրջ հետազոտության մասնակիցների իրազեկվածությունը և առհասարակ պատկերացումներն առ այն, թե ինչ պետք է անել այս ոլորտի բարեփոխումների համար, ինչը նկարագրված է հետազոտության տարբեր մասերում:

24 | Նույն տեղում:

Աշխատանքի ընդունման պրակտիկաները և զբաղվածության փորձառությունը

Աշխատանքի ընդունման գործընթացի ուսումնասիրությունը գյուղական և քաղաքային համայնքներում թույլ է տալիս խոսել հիմնականում փոքր համայնքներին բնորոշ պրակտիկաների մասին: Առաջին հերթին կարևոր է նշել այն հանգամանքը, որ հետազոտության մասնակիցների համար ցանկացած տեսակի աշխատանք, որը դուրս է գյուղատնտեսական գործունեությունից, ընկալվում է որպես պետական: Պետական են համարվում համայնքային աշխատանքը, զբաղվածությունը գյուղապետարանում, համայնքապատկան դպրոցում կամ մանկապարտեզում, սպասարկման ոլորտում կամ ցանկացած մասնավոր այլ ոլորտի աշխատանք:

Աշխատանքի ընդունման գործընթացը փոքր համայնքներում կազմակերպվում է սոցիալական կապիտալի կիրառման պայմաններում: Հետազոտության մասնակիցները փաստում են, որ թափուր աշխատատեղերի մասին տեղեկություն ստանում են հիմնականում ծանոթների, ընտանիքի անդամների միջոցով: Հարաբերությունների այս շրջանակը գործի է դրվում նաև աշխատանքի ընդունվելու գործընթացում: Սակայն սոցիալական կապիտալը աշխատանքի ընդունման հարցում գործադրելուն զուգահեռ կարևորվում է նաև մարդկանց համապատասխան հմտությունների ու գիտելիքի առկայությունը: Հետազոտության մասնակիցները աշխատանքի ընդունվելու հետևյալ պրակտիկաներն են առանձնացնում, որոնց առնչվել են իրենք անձամբ կամ իրենց շրջապատում ուրիշները.

- Հաշվի առնելով նախկին աշխատանքային փորձը՝ հրավեր կամ աշխատանքի առաջարկ ստանալ:

- Ծանոթ լինել գործատուին և փորձաշրջան անցնելու պայմանով դիմել ու ընդունվել աշխատանքի:
- Քննությունով ընդունվել աշխատանքի:
- «Մաղարիչով» աշխատանքի տեղավորվել:

Աշխատանքի դիմելու կամ ընդունվելու պրակտիկաներում առկա խնդիրների մասին խոսելիս հետազոտության մասնակիցները մատնանշում են անարդարության ու խտրականության դրսևորումներ՝ թափուր աշխատատեղերի հայտարարությունների մասին տեղեկության անհասանելիությունից ու դրանց բովանդակությունից, որոնք երբեմն ունեն առավել ձևական, քան գործնական բնույթ, մինչև աշխատանքային փորձի բացակայություն և այլ հարցեր: Հետազոտության մասնակիցների բարձրացրած խնդիրներից մեկը աշխատանքի ընդունման գործընթացում անարդարացիությունն է՝ աշխատանքային հայտարարություններում տարիքի, արտաքին տեսքի վերաբերյալ պահանջները: Խտրականության դրսևորման այս պրակտիկաները քննադատվում են հետազոտության մասնակիցների կողմից և լրացուցիչ խոչընդոտ են զբաղվածության հարցի կարգավորման, գործատուների հանդեպ վստահության ձևավորման գործում:

Գյուղական համայնքներում աշխատանք ունենալու հարցերն իրենց առանձնահատկություններն ու բարդություններն ունեն: Օրինակ՝ Նորատուսում զբաղվածության հիմնական ոլորտը ձկնորոսությունն ու դրանից բխող այլ աշխատատեսակներն են, և մարդկանց զբաղվածությունը կազմակերպվում է այս աշխատանքների շուրջ:

Հաշվի առնելով, որ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ ներգրավված են ձկնորսության ու դրանից ենթադրող գործունեության մեջ, կանայք չեն սահմանում իրենց կատարած աշխատանքը որպես զբաղվածություն՝ չնայած աշխատանքի ֆիզիկական բարդություններին:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Ես ու սկեսուրս ձուկ ենք լվանում, տան գործերով, ամուսինս ու սկեսրայրս էլ ձկնորսությամբ են զբաղվում»:

Ընտանիքի անդամների և իրենց զբաղվածության մասին հետևյալ ձևակերպումը արտահայտում է կանանց՝ սեփական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքն ու առօրյա կենցաղային աշխատանքի հետ նույն մակարդակի ընկալումը:

Զբաղվածության որոշակի առանձնահատկություններով աչքի ընկնող համայնքներում հետազոտության մասնակիցները խոսում են նաև աշխատանքի ժառանգական ու սերնդեսերունդ փոխանցման հարցերի մասին: Դրանց շարքում առանձնացվում են ձկնորսությունը, շինարարական աշխատանքները, որոշակի արհեստներ և մասնագիտություններ ունենալու հանգամանքը, ինչը նաև որոշակի սոցիալական կարգավիճակի արտահայտում է:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Եթե իմ հայրը լիներ պլոտնիկ, ես կլինեի պլոտնիկ: Ես ծնվել եմ, տեսել եմ այդ լոդկան, ձկնորսությունը, այդ եմ արել: Մեկի հայրն էլ խոպանչի է եղել, 30 տարի է՝ խոպան է գնում: Ում ծնողն ինչ սովորեցնում է, իր տղան դա է անում»:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Շինարարությունը ժառանգաբար է անցել, ծնողս շինարար էր, էդպես էլ շարունակվել է: Դե երեխեքի մոտ միշտ էլ էդպես է, չէ՞, նայում են ծնողներին, էդ իրենց համար ամենալավն է: Ու ինձ մոտ ստացվեց»:

Հետազոտության մասնակիցները նաև քննադատության են ենթարկում աշխատաձևերի ժառնագականությունը, պնդում, որ զբաղվածության ձևերի փոխանցումը սերնդեսերունդ հնարավորություն չի տալիս օրվա պահանջին համարժեք մասնագիտություններ ձեռք բերել, որոնց կարիքը աշխատաշուկայում կա:

Գյուղական համայնքներում սոցիալական կարգավիճակը այն հիմնական գործոններից է, որը պայմանավորում է թե՛ աշխատանքի առկայությունը, թե՛ զբաղվածության ոլորտը: Գիտելիքն ու հմտություններն այս պայմաններում հաճախ մղվում են երկրորդային պլան, քանի որ սոցիալական դիրքն է այս պարագայում համարվում զբաղվածության հարցի լուծման առաջնային կարգավորող գործոնը:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Եթե Նորատուսում ինչ-որ մեկը սովորել է, գրագետ է, պարտադիր պետք է հարուստի հարս լինի, որ աշխատի: Իմ կնոջ համար ես երևի մի 10 անգամ դիմել եմ մարզպետարան՝ ցանկացած դպրոցում աշխատելու համար, ոչ մի տեղ չեն կանչել: Եթե ինչ-որ տեղ էլ փոխարինող է աշխատել, հենց հետ են եկել, ազատել են: Ինքը նորից դիմել է մարզպետարան, աշխատանք չեն տվել: Իմ նման ձկնորսի կինը հնարավոր չի, որ դպրոցում աշխատի: Ու իմ կինը բարձրագույն ավարտած է»:

Գյուղական և փոքր քաղաքային համայնքներում աշխատատեղերի սղության պատճառով մարդիկ երկար տարիներ միևնույն զբաղվածությունն են իրականացնում, քանի որ աշխատանքը կորցնելու և ոչ համարժեք աշխատանք գտնելու մտահոգություն ունեն: Հետազոտության մասնակիցները նշում են պատճառներ, օրինակ՝ իրենց կամ ընտանիքի անդամների հիվանդությունը, խնամակալության տակ գտնվող անձանց առկայությունը, ընտանիքի անդամի հաշմանդամությունը. սրանք կարող են հիմք լինել աշխատանքը կորցնելու կամ ֆիզիկական ներգրավվածություն պահանջող աշխատանքը այլ՝ ավելի ցածր վարձատրվող աշխատանքով փոխելու համար:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Ծիրակի մարզ

«Հայրս արտագնա աշխատանքի է, տատիկս 94 տարեկան է՝ կույր, ունեմ առաջին կարգի հաշմանդամություն ունեցող քույր, մայրս էլ երկու անգամ ինսուլտ է ստացել, տան գործերով է զբաղվում: Տանը մենակ ես եմ աշխատող: Համայնքապետն է առաջարկել աշխատանք: Դրանից առաջ շինարարության վրա էի աշխատում, առողջական խնդիրների պատճառով այստեղ եկա»:

Կանանց պարագայում աշխատանքից հրաժարվելը կամ աշխատանքը փոխելը պայմանավորվում է հիմնականում երեխայի ծնվելու հանգամանքով, ինչն էլ շատ դեպքերում մշտական զբաղվածությունը կորցնելու պատճառ կարող է դառնալ:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Ձուկ լվալու աշխատանքներում ես էլ եմ եղել մեկ-երկու տարի՝ մոտ մի 5 տարի առաջ: Ուղղակի երեխաները որ լինում են, էլ չես հասցնում»:

Այստեղ հարկ է նաև շեշտել, որ հետազոտության մասնակիցներն իրենց խոսքում կարևորում են, որ աշխատանքի տեղավորման գործընթացը չուղեկցվի կոռուպցիոն՝ «խնամի-ծանոթ-բարեկամ» սխեմաներով, բոլորը հնարավորություն ունենան հավասարապես մրցակցելու աշխատաշուկայում իրենց տեղն ունենալու համար: Սակայն հետազոտության մասնակիցների մեծ մասի պարագայում գրեթե բոլոր զբաղվածներն իրենց աշխատանքը գտել, աշխատավայրում տեղավորվել են հենց այս սխեմաների կիրառմամբ:

Աշխատանքային պայմանները քննարկելիս հետազոտության մասնակիցները, հատկապես նրանք, ովքեր որևէ պետական կամ մասնավոր կառույցի աշխատակից են, մեծ մասամբ նշում են, որ ունեն պայմանագրեր, որոնք պարբերաբար թարմացվում ու վերակնքվում են: Եզակի էին օրինակ-

ները, երբ մարդիկ մասնավոր կամ պետական կառույցում առանց պայմանագրի էին աշխատում:

Առանձնակի ուշադրության արժանի են արտագնա աշխատանքի մեկնելու առանձնահատկությունները համայնքներում: Հետազոտության մասնակիցները նշում են, որ իրենց համայնքներից տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի Ռուսաստանի Դաշնություն: Կորոնավիրուսային համավարակը և դրա ազդեցության մեղմմանն ուղղված սահմանափակումները, 2022 թվականին Ռուսաստանի՝ Ուկրաինայի դեմ հայտարարած պատերազմը, ռուսական փոխարժեքի նվազումը տնտեսական լուրջ խնդիրներ են ստեղծել արտագնա աշխատող ունեցող հայաստանաբնակ ընտանիքների համար: Թեև հետազոտության մասնակիցները շեշտում են, որ արտագնա աշխատանքն այսօր տնտեսապես շահավետ չէ, սակայն սա պատճառ չէ, որ մարդիկ վերադառնան Հայաստան ու աշխատանք փնտրեն այստեղ: Ընդհակառակը, արտագնա աշխատանքը հետազոտության մասնակիցների համար դեռևս գրավիչ է, մեկնաբանվում է *«ավելի լավ է Ռուսաստան գնա, պարապ իր տանը չնստի, ասեն՝ պարապ է»* ձևակերպմամբ: Խոսակցություններից ենթադրվում նաև, որ արտագնա աշխատանքը շատ դեպքերում տղամարդկանց համար փախուստ է ընտանեկան առօրյայից ու հայաստանյան հոգսերից: Սա, իհարկե, առավել թիրախավորված և խորքային ուսումնասիրման ու մեկնաբանման կարիք ունի:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Ծիրակի մարզ

«Էնքան որ չպառկեն տանը [մեկնում են արտագնա աշխատանքի], չասեն՝ թամբալ էր, չաշխատեց: Երեք տղամարդ որ տանը մնա, մի քիչ ուրիշ ձև կնայվի, դա հանցագործություն է: Ընտանիք է, վերջը պիտի ապրի: Ոչ մի բանից էլ հետ մնալ չես ուզում»:

Զբաղվածության հարցերը և աշխատանքի ոլորտում խնդիրները

Աշխատաշուկայի սահմանափակումներին և զբաղվածությանն առնչվող խնդիրները ամենաբազմազան ձևակերպումներն ունեն հետազոտության մասնակիցների շրջանում: Դրանք սկսվում են անհատական մակարդակից՝ հասնելով մինչև զբաղվածության հարցերի կազմակերպման և կարգավորման բացթողումներ պետական մակարդակում:

Առաջնահերթ քննարկվող խնդիրներից են աշխատաշուկայում աշխատատեղերի սակավությունը և մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնելը: Հետազոտության մասնակիցները հաստատում են, որ ռեսուրսներ են ներդրել ժամանակին, որ կրթություն ստանան, աշխատանք գտնեն ու նույնը նաև իրենց երեխաների առնչությամբ են ասում, սակայն փոքր համայնքներում մասնագիտությամբ աշխատանք գտնելը լուրջ մարտահրավեր է: Նրանք, ովքեր բարձրագույն կրթություն են ստացել, բայց չեն աշխատում իրենց մասնագիտությամբ, հնարավորության դեպքում պատրաստ են աշխատելու: Հետազոտության շրջանակում ուսումնասիրված գյուղական համայնքներում մարդիկ հիմնականում միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեն: Գյուղական որոշ համայնքներում հնարավոր է գտնել միջին մասնագիտական կրթությամբ աշխատանք՝ բուժքրոջ, դերձակի, վարսահարդարի և այլն: Սակայն այն համայնքներում, որտեղ մարդիկ ներգրավված են տվյալ համայնքին բնորոշ և տվյալ համայնքի առանձնահատկություն հանդիսացող զբաղվածության ոլորտում (օրինակ՝ Նորատուսի պարագայում ձկնորսությունը), այլ մասնագետների պահանջարկի պարագայում դժվար է գտնել համապատասխան որակավորում ունեցող անձի, օրինակ՝ կահույքագործի, բրուտի, ատաղձագործի և այլն:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Ես գնում եմ մարդկանց տուն՝ կահույք սարքելու, ինձ հարցնում են՝ վերանորոգում անողի, պատ շարողի տեղ գիտե՞մ: Պահանջը կա, բայց մարդ չկա: Խնդիրն այն է, որ մեր գյուղի տղամարդիկ հիմնականում զբաղվում են ձկնորսությամբ ու մասնագիտության մասին չեն մտածել»:

Կանանց պարագայում աշխատանքը շատ դեպքերում ժամանակավոր է՝ պայմանավորված ամուսնության, երեխաների խնամքով զբաղվելու հանգամանքներով: Գյուղական համայնքներում տղամարդկանց աշխատանքը գյուղատնտեսությունն է, որոշ դեպքերում՝ արտագնա աշխատանքը: Ուսումնասիրված քաղաքային համայնքներում գերակշռում են բարձրագույն կրթություն ստացած մարդիկ, սակայն զբաղվածության ապահովման տեսանկյունից, ցավոք, ձեռք բերված կրթությունը միշտ չէ, որ նպատակային է եղել: Սակայն առկա է նաև հակառակ մեկնաբանությունը, երբ բաձրագույն կրթությամբ մասնագիտությանը համարժեք աշխատանքի դիմաց մարդիկ ավելի ցածր են վարձատրվում՝ ի տարբերություն, օրինակ, սպասարկման ոլորտի աշխատակիցների, ինչն էլ, սոցիալական իրավիճակով պայմանավորված, աշխատանքի ոլորտի փոփոխության պատճառ է դառնում:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Բարձրագույն ավարտած շատ մանկավարժներ նախընտրում են գնան, սուպերմարկետներում վաճառող աշխատեն, քան թե գան դպրոցում իրենց մասնագիտությամբ 40-50 հազար դրամ աշխատեն: Որովհետև էդ սուպերմարկետի աշխատողը կարող է ստանալ 170-180 հազար դրամ: Մեր ուսանողները որ գնում են Երևան, նախընտրում են էնտեղ մնալ, սուպերմարկետում աշխատել ու չվերադառնալ գյուղական համայնք, որտեղ մեծ պահանջ կա քիմիայի, կենսաբանության և այլ ուսուցիչների»:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Մարդիկ տարբեր մասնագիտություններով սովորել են, դիպլոմներ ունեն, բայց համապատասխան աշխատատեղ չկա: Կամ էլ մարդը գնում է աշխատանքի, աշխատավարձը ձեռք չի տալիս»:

Միջին մասնագիտական կրթության կարևորության ու դրան համապատասխան զբաղվածության կազմակերպման հարցը մասնավորապես քննարկվում է այն համայնքներում, որոնք աչքի են ընկնում կամ նախկինում աչքի են ընկել զբաղվածության՝ համայնքին բնորոշ գործունեությամբ, օրինակ՝ Արթիկ համայնքը հայտնի է քարերի արտադրությամբ և շինարարությամբ: Միջին մասնագիտական կրթության թերի զարգացվածության հետևանքով աշխատաշուկայում կոնկրետ այս ուղղվածությամբ մասնագետների սակավությունը առարկայական խնդիր է:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Էդ խնդիրներն առաջացել են, որովհետև արհեստագործական ուսումնական կենտրոններ չկան: Նախկինում եղել են, մարդիկ մասնագիտացել են: Դա շատ ճիշտ էր: Տեղ լինի, որ երեխան դպրոցից հետո, ինչը որ իրեն հոգեհարազատ է, գտնի, գնա, սովորի: Մի ժամանակ հետո մենք շատ լուրջ խնդիրներ կունենանք, արհեստագործների պակաս: Տարիքով մարդիկ մահանում են, ջահելները չեն ուզում դրա մեջ մտնեն»:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Միջին մասնագիտական կրթությամբ աշխատելու հնարավորություն էլ չկա. գործարաններ չկան: Կարելի է միջին մասնագիտականը զարգացնել»:

Կախված համայնքի առանձնահատկություններից՝ արհեստ ունենալը երբեմն ավելի է կարևորվում, երբեմն գերազանցում է բարձրագույն կրթություն ստանալու անհրաժեշտությանը: Հետազոտության մասնակիցների շրջանում

կան նաև օրինակներ, երբ մարդիկ, միջին մասնագիտական կրթություն ունենալով, կարողացել են զբաղվածության ոլորտում ինքնադրսևորվել աշխատանքային շուկայի պայմաններին ու պահանջներին համապատասխան:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Մեր պայմաններում արհեստն ավելի հարգի է, հարմար է, փողն էլ ավելի շատ է, քան բարձրագույն կրթության դեպքում: Ես չունեմ բարձրագույն կրթություն, բայց աշխատում եմ ավելի շատ, քան բարձրագույն կրթությամբ ցանկացած մարդ»:

Մյուս կողմից միջին մասնագիտական կրթության պահանջարկը կամ երիտասարդների հետաքրքրությունը դրա նկատմամբ հետազոտության մասնակիցները նաև մեկնաբանում են առհասարակ նոր սերնդի հետաքրքրությունների փոփոխությամբ ու հեշտ ճանապարհով գումար աշխատելու լայն հնարավորություններով, քանի որ այդպես երիտասարդները փորձում են հեռու մնալ ֆիզիկական աշխատանքից, աշխատել տեղեկատվական տեխնոլոգիաների, բլոգինգի և այլ ոլորտներում:

Բոլոր դեպքերում չէ, որ որևէ տեսակի զբաղվածություն ունենալը հետազոտության մասնակիցները պայմանավորում են ֆինանսական որևէ խնդրի լուծմամբ: Երբեմն սոցիալապես ավելի ապահով ընտանիքների կանայք նշում են, որ իրենց համայնքում աշխատատեղերի առկայությունը կարող է նրանց համար սոցիալական միջավայրի ձևավորման հնարավորություն տալ:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Օրինակ՝ ես ներկա պահին գումարի կարիք չունեմ: Բայց որպես երիտասարդ՝ կուզեի մի տեղ լիներ, թող 150 000 աշխատավարձ լիներ, ես տնից դուրս գայի, բայց իմ տարածքում, իմ գյուղում լիներ: Մնացածի հետ դուրս գայի: Գոնե էդքան: Էնքան որ դու չմնայիր տանը»:

Զբաղվածության ոլորտում առկա խնդիրներից հետազոտության մասնակիցները մատնանշում են անհատական պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը: Սակայն այս խնդիրներն իրենց հիմքերն ունեն, որոնք քննարկումների ժամանակ դուրս են բերվում: Փոքր համայնքներում, գյուղական համայնքներում աշխատատեղերի սակավությունը, ցածր վարձատրությունը պատճառ են դառնում աշխատանքի նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի ու մոտիվացիայի բացակայության: Արդյունքում զբաղվածության հարցը կարգավորելու նպատակով այս համայնքներից երիտասարդները հիմնականում գնում են մայրաքաղաք՝ ավելի բարենպաստ աշխատանք գտնելու ակնկալիքով: Հետազոտության մասնակիցների մի մասը պնդում է, որ մարզերում աշխատանքի դիմաց վարձատրությունը անարդարացիորեն ցածր է: Սակայն այս կարծիքը ևս ենթարկվում է քննադատության այն հիմնավորմամբ, որ մարզերում կյանքի կազմակերպման ու ապահովման հնարավորություններն են ավելի էժան՝ ի տարբերություն մայրաքաղաքի, և նշված ցածր վարձատրությունը բավարարում է մարզում կյանքն ապահովելուն:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Երևանում ավելի ցածր գումարով են աշխատում, քան տեղում կաշխատեին: Երևի մտածում են՝ մայրաքաղաք, շքեղ բաներ և այլն, բայց ավելի շատ տանջանքն է: Ժողովրդի մեջ մտած չէ, որ կարող է դռան վրա փոշոտ գործեր անել, մտածում է՝ գնամ էդ փոշոտ գործը Երևանում անեմ, որ ընկերներս չտեսնեն»:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Բայց դրսում ծախսն էլ է շատ: Մեր քաղաքի համար միջին վարձատրությունն ավելի արդյունավետ է, քան Երևանի համար միջին աշխատավարձ ստանալը: Այնտեղ ծախսն էլ է ավելի շատ: Այստեղ կարող ես ոտքով քաղաքի մի ծայրից մյուսը գնալ»:

Առհասարակ համայնքից դուրս աշխատանքի փնտրտուքի հարցը դիտվում է նաև որպես բարդություններից խուսափելու և պայքարել չցանկանալու տարբերակ: Որքան էլ մայրաքաղաքը, արտերկիրը թվացյալ ավելի մեծ հնարավորություններ են առաջարկում զբաղվածության հարցի կազմակերպման, կրթությանը համարժեք աշխատանք գտնելու համար, այնուամենայնիվ, կենսապայմանների ու առօրյայի կազմակերպման ձևերը փոքր համայնքներում հետազոտության մասնակիցները բնութագրում են ավելի հեշտհասանելի: Քննադատելով *«աշխատանքը ամոթ է»* հայեցակարգը հայաստանյան հասարակության մեջ՝ մատնանշում են, որ հասարակությունը սովոր է պարապ մնալուն, չաշխատելուն՝ պատճառաբանելով ցածր վարձատրությամբ, բայց նույն աշխատանքը պատրաստակամ են անելու արտերկրում նույնանման կամ հնարավոր բարձր վարձատրության պայմաններում:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Ես գիտեմ, որ աշխատողներ էին պետք [համայնքում հիմնված գործարանում], ուղղակի չաշխատեցին: Մի փոքր աշխատանք կար՝ արդուկի: Շատ հեշտ գործ էր, բայց չէին գնում. ով մտավ, դուրս եկավ: Ուզում եմ ասել՝ մի քիչ էլ աշխատելու ցանկությունը չկա: Գուցե աշխատավարձը լավ չէր, բայց էնքան չեն աշխատել մեր տեղի կանայք, ցանկություն էլ չկար աշխատելու: Մարդիկ ասում էին՝ հա դե, փողն է քիչ, շատ ենք հոգնում»:

Զբաղվածության մասին խոսելիս մարդիկ կարևորում են նաև պատասխանատվության, պատշաճ աշխատելու և համարժեք վարձատրության հարցերը: Մարդկանց պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ շատ սուր արտահայտվում է բոլոր քննարկումների ժամանակ՝ երբեմն անհատական պատասխանատվությունը առաջ դասելով զբաղվածության ոլորտում առկա այլ խնդիրներից:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Մեկ այլ խնդիր էլ այն է, որ պատասխանատվության մեխանիզմ չկա: Ով որտեղ ինչ պաշտոն զբաղեցնում է, վարձատրվում է, իրենից չեն պահանջում դրա դիմաց պատասխանատվություն: Ինչ-որ մեկը պաշտոնը զբաղեցնում է, աշխատավարձը ստանում է, թե ինչ կլինի, հետաքրքիր չէ: Էդ համակարգը լավ չի»:

Ոմանք քննարկում են նաև աշխատատեղերի առկայության և աշխատողների սակավության հարցը: Մասնավորապես հետազոտության մասնակիցները առաջ են բերում *«գլուխ պահելով»* աշխատելու դիմաց բարձր անհամարժեք վարձատրություն ակնկալելու մտածողությունը, որը տարիների ընթացքում ներքնայնացված է հայաստանյան մշակույթում: Այստեղ հետազոտության մասնակիցները բարձրաձայնում են աշխատանքային նպաստավոր պայմանների, գործատուների հետ հարաբերությունների հարցերը: Մարդիկ ակնկալում են գործատուի կողմից նպաստավոր աշխատանքային միջավայրի ապահովում, որը կարող է բարձրացնել նաև աշխատողների մոտիվացիան ու ավելի նվիրված աշխատանք կատարելու պատրաստակամությունը: Գործատուի հետ հարաբերությունների կարգավորման հարցում առանցքային է նաև իշխանական հարաբերությունների ու դիրքավորման բացակայության պայմանը, որը կարող է աշխատողների մեջ մոտիվացիայի ու անարդարության զգացում առաջացնել:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Մի ուրիշ բան էլ կարևորենք՝ աշխատանքային պայմանները: Շատ աշխատավայրերում պայմաններ չկան, որ մարդիկ աշխատանքի գնան հաճույքով, ոչ թե որպես պարտականություն: Ես իմ երկու աշխատավայրերում տարբեր զգացողություններ եմ ունեցել, չնայած որ նույն պատասխանատվությամբ եմ մոտեցել իմ աշխատանքին: Մի տեղում կորցնում էի ժամանակի զգացողությունը, 6-ը գալիս էր, չէի

զգում, որ պիտի տուն գնամ: Մյուս տեղում մտքիս անընդհատ էն էր, թե տնօրենը երբ պիտի գնա, որ ես փախնեմ: Թե ինչի, չգիտեմ»:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Ամեն ինչ երկկողմանի է: Եթե գործատուն լավ է վերաբերվում, բնականաբար աշխատողը կլինի սրտացավ: Պարզապես պետք է պահպանել գործատու-աշխատող հարաբերությունը և երբեք, որպես գործատու, աշխատողին չնվաստացնել, միշտ լինել նույն հարթության վրա»:

Աշխատանքային միջավայրում մոտիվացիայի խնդրին անդրադառնալով՝ դուրս է բերվում ևս մեկ շերտ, որն է՝ աշխատակիցների հանդեպ գործատուների անհատական մոտեցման բացակայությունը:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Մեկ ուրիշ խնդիր էլ նշեմ տնօրենի և աշխատողների միջև. անհատական մոտեցում չկա, համընդհանուր մոտեցում է: Մեկը սխալ է անում, ընդհանուրին վերաբերվում են որպես այդ սխալը կրողի: Սխալ անողին անհատապես չի բացատրվում, որ դու էս օղակում սխալ արեցիր, քո պատճառով հաջորդ օղակներն էլ տուժեցին ու սխալը շարունակեցին: Ու այդ իբր թե հավասարությունը աշխատանքի որակի վրա ազդում է, որովհետև լավ աշխատողն արդեն հիասթափվում է ու էլ չի ուզում նույն կերպ աշխատել»:

Զբաղվածության հարցերով սեփական փորձառության և խնդիրների մասին խոսելիս հետազոտության մասնակիցները մատնանշում են դեպքեր գործատուի անբարեխղճության, աշխատավարձի վճարման ձգձգման մասին:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Նույնիսկ աշխատանքի տեղ է եղել, որ թվացել է, թե իմ աշխատանքի դիմաց տնօրենը վարձատրում է իր գրպանից, ոչ թե պետական վճար եմ ստանում: Ամեն անգամ աշխատա-

վարձ տալուց այնպիսի տպավորություն է, որ՝ չեմ ուզի, չեմ տա, կարող եմ մինչև 15-ը ուշացնել, ուշացնում եմ»:

Ինչպես վերը քննարկեցինք, գյուղական և փոքր քաղաքային համայնքներում ծանոթի առկայությունը նշանակալի գործոն է աշխատանքի ընդունման համար: Սակայն կարևորվում է նաև աշխատանքային փորձը, որի բացակայության պայմաններում աշխատանքի դիմելու հնարավորություններն էականորեն կրճատվում են:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Եթե աշխատանքային փորձ չկա, Ռուսաստանի ճամփեն բաց է: Չեն վաճառում էդ աշխատանքային փորձը, որ առնենք: Հնարավորություն չեն տալիս, որ գնաս աշխատես, սովորես, առաջ գնաս»:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված քաղաքային համայնքներում, ի տարբերություն գյուղական համայնքների, քննարկվում է նաև աշխատանքային իրավագիտակցության հարցը: Սա շատ հստակ ձևակերպվում է հետազոտության մասնակիցների կողմից իբրև աշխատողի իրավունք և գործատուի պարտականություն՝ աշխատողին աշխատանքային պայմանների մանրակրկիտ ու թափանցիկ ներկայացման համար: Խոսքը մասնավորապես վերաբերում է աշխատավարձի չափին, արձակուրդային հասանելիք օրերի քանակին, արհմիության գումարներին և այլն: Այստեղ նաև առաջ են գալիս աշխատողի շահագրգռվածությունն ու անհատական շարժառիթը՝ սեփական իրավունքների մասին տեղեկանալու և աշխատանքային իրավունքների ոտնահարումները բարձրաձայնելու համար:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Իմ պրակտիկայում եղել է, որ հարցրել են՝ ես էս տարի արձակուրդ գնալո՞ւ եմ, թե՞ չէ: Չգիտի: Այսինքն, եթե ես կադրերով եմ զբաղվում, ասեմ՝ հա, գնալու ես, կգնա, ասեմ՝ չէ՛, չի

գնալու: Չգիտեն՝ քանի կեսով իրավունք ունեն գնալու, իրավունք ունեն, թե չէ»:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Նաև աշխատողների իրավագիտակցության մակարդակն է խնդիր: Ոչ ոք չգիտի՝ երբ պիտի գնա արձակուրդ, ինչքան է իր աշխատավարձը, ինչու է այդքան: Ու նման շատ խնդիրներ»:

Գյուղական համայնքներում զբաղվածությանն առնչվող հարցերը նաև ուղղակիորեն պայմանավորված են հանրային տրանսպորտի անկանոն աշխատանքով՝ հատկապես այն պարագաներում, երբ մարդիկ բնակվում են գյուղական համայնքներում, բայց աշխատում են մոտակա համայնքային որևէ քաղաքում: Սա շատ դեպքերում աշխատանքից հրաժարվելու պատճառ կարող է լինել:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Եթե գյուղում ես ապրում ու քաղաքում ես աշխատում, առաջինը տրանսպորտի ժամերի հարցն է: Եթե մեքենա չունես, տրանսպորտով աշխատանքի գնալ կարող է չհասցնես»:

Հետազոտության գյուղաբնակ մասնակիցները պատմում են զբաղվածության հարցի կարգավորման ճանապարհին իրենց փորձից՝ նշելով, որպես սոցիալապես խոցելի խմբի ներկայացուցիչներ, կարողությունների զարգացման դասընթացների մասնակցության մասին: Թեև կարևորվում է կարողությունների զարգացման տարբեր դասընթացների կազմակերպումը, որոնք հետագայում խոցելի խմբերի՝ սոցիալապես անապահով ընտանիքների ներկայացուցիչներին հնարավորություն կտան ներգրավվելու աշխատաշուկայում, սակայն դա ուղղորդվում է նաև քննադատությամբ: Մասնավորապես քննադատությունն ուղղված է այս դասընթացների ընթացքում տրված գիտելիքի ու դրա ստուգման ընթացակարգի անհամապատասխանությանը, որի հե-

տևանքով այդպես էլ չի կարգավորվում զբաղվածության հարցը:

Հայաստանում զբաղվածության հիմնախնդիրների հիմքերի, գործատուի պատասխանատվության և աշխատանքային պայմանների ու իրավագիտակցության բարձրացման խնդիրների մասին խոսելուց զատ՝ հետազոտության մասնակիցները որպես շատ ընդհանուր պատճառ առանձնացնում են պետության, գործատուի և քաղաքացիների՝ զբաղվածության հարցում ընդհանուր աշխատանքային տեսլականի ու համախմբվածության բացակայության հարցը:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Աշխատանքային կուլտուրան զարգացած չէ: Համախմբված չեն աշխատում, նույն ուղղությամբ չեն նայում: Նպատակին հասնելու համար յուրաքանչյուրն առանձին է աշխատում, նույն նպատակին ավելի բարդ ճանապարհով են հասնում»:

Հետազոտության մասնակիցները քննարկում են նաև զբաղվածության ոլորտի կարգավորման նպատակով պետության անպատասխանատվությունը, ինչը նպաստում է թե՛ աշխատակիցների, թե՛ գործատուների անպատասխանատվության անհատական մակարդակում:

Պետության դերն ու անելիքը զբաղվածության կարգավորման գործում

Զբաղվածության ոլորտի կարգավորման նպատակով հետազոտության մասնակիցները առանցքային տեղ են հատկացնում պետության անելիքներին, որոնք այսօր գնահատվում են ոչ բավարար և ենթարկվում են քննադատության՝ բնութագրվելով որպես *անգործություն, ոչ թափանցիկություն:*

Շատ ընդհանուր ձևակերպմամբ՝ պետության՝ զբաղվածության ոլորտում փոփոխություններին ու կարգավորմանն ուղղված գործողությունները մարդիկ տեսնում են աշխատաշուկայի պահանջարկի հետևողական վերլուծության ու ըստ այդմ զբաղվածության ոլորտների ու մարդկային ռեսուրսների համարժեք բաշխման մեջ:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Ինձ թվում է՝ վիճակագրական տվյալներն են շատ սխալ: Պետք է ավելի ռեալ հասկանալ, թե մեր տարածքում ինչ մասնագետ է պետք, ըստ դրա նոր արդեն այդ ծրագրերով կառավարությունը զբաղվի: Ոչ մեկը ռեալ չի տիրապետում՝ մեզ ինչ է պետք: Դրա համար էլ մասնագետների լճացում է լինում, մարդիկ իրենց մասնագիտությամբ չեն կարողանում աշխատել, գնում են այլ բնագավառ»:

Կրթության բացը կարող է պատճառ դառնալ զբաղվածության հարցերի կարգավորման համար: Այստեղ պետությունից զատ նաև անհատական պատասխանատվության ու հնարավորության հարցն է քննարկման դաշտ գալիս: Պետությունից ակնկալում են, որ վերջինս պետք է համայնքներում համապատասխան վերլուծություններ, գնահատումներ իրականացնի, քարտեզագրի բացակայող մասնագիտություններն ու մասնագետներին, ինչը հնարավորություն կտա արդյունավետ կազմակերպելու աշխատաշուկան և մարդկանց զբաղվածությունը: Աշխատանքային ռեսուրսների և աշխատաշուկայի պահանջների անհամաչափ բաշխումն է, որ հետազոտության մասնակիցները ձևակերպում են որպես պատճառ գյուղական ու փոքր քաղաքային համայնքներում աշխատուժի արտագաղթի համար:

30-44 տարեկան կանայք, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Աշխատանքի առումով գյուղի վրա հույս չենք դնում, միշտ ձգտում ենք դուրս»:

«Ում էլ հարցնես, գնալու ծրագիր, մտադրություն ունի՝ երեխեքին վերցնի, գնա»:

«Երեխան 9-ը վերջացնի, դուրս գան»:

«Որ երեխան ապագա ունենա»:

Հետազոտության մասնակիցները համայնքային մակարդակում պետության կողմից աշխատատեղերի ստեղծման հստակ պահանջ են ձևակերպում:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Աշխատատեղեր պիտի ստեղծի պետությունը: Օրինակ՝ կանայք ինչի՞ պիտի ֆիզիկական ծանր աշխատանք անեն: Գյուղատնտեսությունն արդեն ծանր աշխատանք է, բայց ստիպված պիտի անի, որ ընտանիքը պահի, կողքից օգնի: Իսկ եթե կանանց ավելի համապատասխան աշխատանք լինի, պարզ է, որ ոչ մեկը չի զբաղվի գյուղատնտեսությամբ, բոլորը կգնան էդ աշխատանքին»:

Զբաղվածության ոլորտում որոշակի բարեփոխումներ քաղաքային համայնքներում ամեն դեպքում նկատելի են, սակայն գյուղական համայնքների բնակիչներն այդ ուղղությամբ բարեփոխումներ դժվարանում են մտաբերել:

Ուսումնասիրված համայնքներում հետազոտության մասնակիցները ցածր վարձատրությունը պայմանավորում են նաև համայնքների խոշորացմամբ ու հաստիքների ընդլայնմամբ:

Քննադատությունից զատ՝ հետազոտության մասնակիցները գնահատում են զբաղվածության հարցերը կարգավորելու ուղղությամբ պետության պատրաստակամությունը և ջանքերը, սակայն տարիների բացը կարճ ժամանակահատվածում լրացնելու դժվարությունները ևս մարդիկ ընդունում են:

Գյուղական համայնքներում աշխատատեղերի սակավությունը գործազրկության լուրջ պատճառ է, որի կարգավորման ուղղությամբ հետազոտության մասնակիցները շեշտադրում են պետության թերացումները և ոչ բավարար ջանքերը: Քանի որ գյուղական համայնքներում աշխատանքը մեծ մասամբ սեզոնային է, իրենց ձևակերպմամբ՝ կա բերք, կա վաճառք, հետևաբար կա նաև ակտիվություն այլ ոլորտներում, և որոշակի սեզոնների մարդկանց եկամուտն ու սոցիալական դրությունը ժամանակավորապես ավելի բարեկեցիկ են դառնում: Գյուղական համայնքներում զբաղվածության հարցում անկայունության հանգամանքը կարգավորելու նպատակով հետազոտության մասնակիցները պատկերացնում են պետության և մասնավորի համագործակցությունը գործարանների կամ այլ աշխատատեղերի բացման ուղղությամբ: Ըստ հետազոտության մասնակիցների՝ աշխատատեղերի ստեղծումը, գործարարներին աջակցության տրամադրումը, պետության կողմից նպաստավոր պայմանների ստեղծումը և վերահսկողությունը կարող են կարգավորել մարզերում զբաղվածության հարցը:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Ասեցին՝ պետք է մսի կոմբինատ բացվի, պահածոների ցեխ բացվի, բայց մնաց: Որ բացվեր, էլի որոշակի քանակով մարդիկ կաշխատեին. մեկը առաքիչ կլիներ, մեկը՝ էս, մեկը՝ էն: Էդ էլ տենց պատերը կանգնած մնաց»:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Ծիրակի մարզ

«Եթե, օրինակ, կարի արտադրամաս լինի, պարզ է, որ ժողովուրդն ինքնըստինքյան աշխատատեղ կունենա: Գյուղատնտեսությամբ չես զբաղվի, կգնաս էդ աշխատանքին»:

Այս հարցում կարևորվում է, որ պետությունը հաշվի առնի համայնքային առանձնահատկությունները զբաղվածության ճիշտ կազմակերպման ու համայնքային բարիքները ներքին շուկայում և արտադրության մեջ ճիշտ կիրառելու համար:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Մենք լիքը ցեխեր ունենք, կապչոնկա են սարքում: Կարող են նաև պահածո սարքել: Ձկան գինն էլ կբարձրանա, երբ որ պահանջարկը մեծանա: Մենք էսօր ջրի ափին ենք: Ես գիտեմ, որ մեր սիգը բանակ չի հասնում: Ինչ-որ բան առնում են, չէ՞, բանակի համար: Կարելի է մենք արտադրենք, մենք մատակարարենք բանակին, ինչի՞ դրսից բերեն: Մեզ էստեղ պահածոյի գործարան է պետք: Ու չարտահանենք, թող մնա մեզ մոտ»:

Պետության անելիքների շարքում հետազոտության մասնակիցներն առանձնացնում են նաև մարզային մակարդակում որոշում կայացնող պաշտոններում ճիշտ մասնագետների ընտրությունը: Խոսքը համայնքային աշխատակիցների, մարզերից ներկայացված պատգամավորների մասին է, որոնք համապատասխան որոշում կայացնող օղակներում հասցեական կկարողանան բարձրացնել համայնքին առնչվող զբաղվածության խնդիրները ու կարգավորել դրանք:

Զբաղվածությանն առնչվող հիմնախնդիրների մասին խոսելիս առանցքային է տեղեկատվության բացը:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Մի խնդիր էլ կա, որ պետությունը թերանում է: Իրազեկվածությունը: Ինֆորմացիան մեզ չի հասնում: Եթե կա անգամ աշխատանք, որին կարող է դիմող էլ չկա, տարիներով թափուր մնում է, ես դրա մասին տեղյակ չեմ: Ինչի՞ տեղյակ չեմ: Որովհետև չեմ փնտրում: Որովհետև ես իմ կոմֆորտ զոնայում աշխատում եմ, ավել կուզեմ, բայց որ շատ մեծ ռիսկով: Բայց եթե էդ ինֆորմացիան հասնի ինձ, գուցե ես էլ փորձեմ դիմել: Աշխատաշուկայի մասին տեղեկատվությունը շատ քիչ է»:

Հետազոտության մասնակիցները նկատում են պետության կողմից զբաղվածության հարցի կարգավորմանն ուղղված

որոշակի գործողություններ և քայլեր, մասնավորապես ներկայացնում են իրենց շրջապատից որոշակի օրինակներ, երբ Միասնական սոցիալական ծառայության համակարգով իրենց ծանոթը աշխատանքի ընդունվելու հնարավորություն է ստացել: Սակայն այստեղ արձանագրում են, որ առհասարակ աշխատատեղերի մասին ընդհանուր իրազեկվածության պակաս կա, և կա անհրաժեշտություն՝ ունենալու մի համընդհանուր հարթակ, որտեղ գործատուները, այդ թվում՝ պետությունը, կարող են ներկայացնել իրենց անհրաժեշտ մասնագետների ցանկը և վայրը, իսկ քաղաքացիները կարող են տեղեկանալ, թե ինչ թափուր աշխատատեղեր կան: Սա է նաև պատճառը, որ Միասնական սոցիալական ծառայության դերը հետազոտության մասնակիցները ցածր են գնահատում, քանի որ այս տեղեկությունը հասանելի չէ բոլորին, գործազուրկներն ու աշխատողները տեղյակ չեն աշխատանքային առաջարկներին և հնարավորություններին:

Մասնավորապես քննարկվում է նման հարթակի հասանելիության կարևորության հարցը, հասանելիության թե՛ հանրության լայն շերտերի, թե՛ աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից: Հարթակի հասանելիությունը և դրա աշխատանքների կազմակերպման մատչելիությունն ու թափանցիկությունը ևս կարևոր հանգամանք են, որը հետազոտության մասնակիցները քննարկում են:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Մեկը աշխատանքից դուրս է գալիս, օրինակ՝ բարձրագույն ավարտած մարդ: Պիտի թղթերը հավաքի, գնա զբաղվածության կենտրոն, ասի՝ ես աշխատանք եմ փնտրում, խնդրում եմ լինելու դեպքում ինձ տեղեկացնել: Բայց հիմա 21-րդ դարն է, տեխնոլոգիայի դար, հնարավոր չէ՞ որ մի բազա լինի, որտեղ երևա՝ ինչ աշխատանք կա: Ոչ թե ծանոթից իմանան: Բոլորին հասանելի լինի, որ էս պաշտոնը թափուր է»:

Գյուղաբնակ մարդիկ կարևորում են հատկապես կարողությունների զարգացման ծրագրերի դերը զբաղվածության հարցի կարգավորման գործում՝ կար ու ձևի խմբակներ, վարսահարդարում, խմորեղենի պատրաստում, որը, իրենց ձևակերպմամբ, կօգնի աշխատանքի ընդունվելու:

Զբաղվածության ոլորտում կարգավորող մեխանիզմներ մշակելու գործում պետության գործառույթների մասին խոսելիս հետազոտության մասնակիցները նաև շեշտադրում են պետության սահմանափակ ռեսուրսների և հնարավորությունների հարցերը, մասնավորապես՝ առաջնային անվտանգային, տարիներ շարունակ կոռուպցիայի և հանրային այլ ոլորտներում առկա խնդիրները, որոնք զբաղվածության հարցերի կարգավորման ճանապարհին ավելի դժվարհասանելի են դարձնում:

Աղքատության և զբաղվածության փոխառնչությունները

Աղքատություն և աղքատներ. սահմանումներ և ընկալումներ

Հայաստանում աղքատության գնահատման հիմքում ընկած է «հիմնական կարիքների արժեքի» մեթոդը, որն, ըստ էության, գնահատում է սպառողական զամբյուղի դրամական արժեքը, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Ըստ այդմ՝ **աղքատ** են համարվում այն տնային տնտեսությունները, որոնց բյուջեն/սպառումն անբավարար է այդ զամբյուղի արժեքն ապահովելու համար (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2022)[25]:

Աղքատության գիծը դրամական արտահայտությամբ սահմանում է պարենային և ոչ պարենային ապրանքների և ծառայությունների արժեքը, որն անհրաժեշտ է կենսամակարդակի նվազագույն պահանջները բավարարելու համար: Հայաստանում, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, հաշվարկված է աղքատության չորս գիծ՝ 1) պարենային աղքատության գիծ, 2) աղքատության ստորին գիծ, 3) աղքատության վերին գիծ և 4) աղքատության միջին գիծ: Պարենային աղքատության գիծը սահմանվում է որպես օրվա ընթացքում անհատի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն էներգիայի պահանջը բավարարող սպառում, որը, համաձայն 2019 թվականի վիճակագրական տվյալների, հաշվարկվել է 2307 կիլոկալորիայի (կկալ)

25 | ՀՀ վիճակագրական կոմիտե. (2022). *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը*. վերցվել է՝ https://armstat.am/file/article/poverty_2022_a_6.pdf

չափով: Այն հաշվարկվում է, թե որքան գումար է անհրաժեշտ 2307 կկալ պարունակող պարենային զամբյուղ գնելու համար, որը մեկ չափահաս անձի հաշվով գնահատվել է ամսական 23,763 ՀՀ դրամ: Պարենային աղքատության մակարդակը Հայաստանում 1,4% է (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2022): Աղքատության ստորին գիծը սահմանելու համար հաշվարկվում է այն տնային տնտեսությունների ոչ պարենային մեդիան սպառումը, որոնց մեկ չափահաս անձին համարժեք համախառն սպառումը պարենային աղքատության գծից մի փոքր հեռավորության վրա է՝ 5%-ի միջակայքում: Այդ մեդիան ավելացվում է պարենային աղքատության գծին՝ աղքատության ստորին գիծը ստանալու համար: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019 թվականի համար աղքատության ստորին գիծը գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով ամսական 35,054 ՀՀ դրամ, իսկ աղքատության ստորին գծով հաշվարկված՝ աղքատ է ՀՀ բնակչության 10,2%-ը: Աղքատության վերին գծի սահմանման համար հաշվարկվում է այն տնային տնտեսությունների ոչ պարենային մեդիան սպառումը, ըստ որի՝ մեկ չափահաս անձին համարժեք պարենային սպառումը պարենային աղքատության գծից փոքր հեռավորության (5%) միջակայքում է: Այս մոտեցմամբ՝ 2019 թվականի համար գնահատված աղքատության վերին գիծը մեկ չափահաս անձի հաշվով ամսական 53,043 ՀՀ դրամ է, իսկ աղքատության վերին գծով հաշվարկված՝ աղքատության մակարդակը 43,8% է: Միաժամանակ հաշվարկվում է աղքատության միջին գիծ, ինչը ստորին և վերին գծերի միջինն է և մեկ չափահաս անձի հաշվով Հայաստանում ամսական 44,048 ՀՀ դրամ է: Ըստ աղքատության միջին աղքատության մակարդակի հաշվարկի՝ Հայաստանում աղքատ է բնակչության 26,4%-ը:

Հանրության շրջանում աղքատության սահմանումները շատ տարբեր են, ինչպես տարբեր են աղքատության պատճառների շուրջ պատկերացումները: Դրանք կապվում են

գործազրկության հետ, որի հիմքում էլ աշխատատեղերի, աշխատելու համար կարողությունների կամ աշխատելու ցանկության բացակայությունն է, երբեմն էլ մեղադրում են հենց աղքատ մարդուն սեփական աղքատության համար:

Այսպես՝ հետազոտության մասնակիցներն առավել հաճախ աղքատությունը սահմանում են որպես գոյության համար անհրաժեշտ առաջնային ապրանքներ ձեռք բերելու անկարողություն: Առաջնային ապրանքներ են օրվա համար անհրաժեշտ սնունդը և կենսապայմանները, մասնավորապես՝ կոմունալ ծառայությունների համար վճարելու հնարավորությունները: Ըստ այդմ, եթե մարդիկ կարողանում են իրենց, այսպես կոչված, «օրվա հացը» վաստակել, ապա այլևս աղքատ չեն կամ ծայրահեղ աղքատության մեջ չեն:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Ամեն օր գոնե թարմ հաց ուտեն»:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Ես աղքատ եմ համարում էն մարդկանց, ովքեր օրվա հացը չունեն»:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Որ ձուկ ենք ծախում, ընտանիքներ կան, որ երեխան գոռում է՝ մամա, ձուկ են ծախում, մայրը գոռում է՝ փող չկա, ներս արի: Էդ արդեն աղքատության նշան է»:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Կարող է օրվա հաց է վաստակում, բայց էդպես ծայրահեղ աղքատ չի»:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Կոմունալները կարողանան վճարել: Կոմունալների հետ ժողովուրդը շատ խնդիրներ ունի: Թեկուզ փոքր գումարներ, չեն կարողանում վճարել: Բառացի աղքատություն է, էլի»:

Ընդ որում՝ այստեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ հետազոտության մասնակիցներն առանձնացնում են առաջնային և ոչ առաջնային ապրանքներ, և իրենց դիտարկմամբ, եթե մարդը կարողանում է ոչ առաջնային ապրանքներ ձեռք բերել և օգտվել այդպիսի ծառայություններից, ուրեմն աղքատ չէ: Որպես ոչ առաջնային է սահմանվում, օրինակ, ինտերնետի ծառայությունը:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Բայց տեսեք, թոշակից այդքանը նախատեսում է, որ պիտի տա ինտերնետին, ուրեմն իր վիճակն այդքան էլ վատ չէ: Եթե հաց չունենար, հաստատ այդքանը չէր տրամադրի ինտերնետին»:

Աղքատության սահմանումներում հետազոտության մասնակիցները կարևորում են նաև եկամուտ-ծախս հարաբերակցությունը՝ աղքատությունը սահմանելով որպես մի վիճակ, երբ ծախսերի համար առավել շատ գումար է անհրաժեշտ, քան եկամուտն է, ընդ որում՝ անկախ եկամտի չափից:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Կապ չունի եկամտի չափը: Կարող է 1 մլն ստանա, 1,2 մլն ծախսի, էլի աղքատ է: Եթե ֆինանսական միջոցների աճ չի գրանցում, ուրեմն աղքատ է»:

Հետաքրքիր է նկատել, որ հետազոտության որոշ մասնակիցներ «աղքատություն» եզրույթը սահմանելիս կամ «աղքատության պատճառների» շուրջ իրենց դիտարկումներում հաճախ մեղադրում են աղքատ մարդուն սեփական աղքատության համար: Աղքատ մարդիկ, ըստ հետազոտության մասնակիցների, *«բավականաչափ ջանք ու եռանդ չեն ներդնում աղքատ չլինելու համար», «նախընտրում են օգտվել սոցիալական աջակցության ծրագրերից, քան աշխատել», «գենետիկ մակարդակում է աղքատությունը», «ծույլ են», «աղքատու-*

թյունը հոգեբանություն է» և այլն: Սակայն սա միայն Հայաստանին բնորոշ իրողություն չէ, աշխարհի տարբեր, գրեթե բոլոր երկրներում տարածված է այն դիտարկումը, որ աղքատությունը հետևանք է ջանք ու եռանդի բացակայության և անհատական ձախողման, աղքատության համար մարդիկ չպետք է մեղադրեն այլոց, այլ խնդիրը պետք է փնտրեն իրենց մեջ: Արդյունքում մենք բախվում ենք մի իրականության, որտեղ բարձր աղքատության ստատուս քվոն ընդհանուր առմամբ ընդունելի է, և նախաձեռնություններ չկան այն հասցեագրելու համար[26]: Այլ կերպ ասած՝ սա աղքատի հիմնախնդիրն է, և ինքը պետք է լուծի դա, հասարակության այլ անդամները դրա համար պատասխանատվություն չունեն:

26 | Confronting Poverty. *What is the moral ground to view poverty?* Retrieved from: https://shorturl.at/ajqH7

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Թամբալությունն էլ է աղքատության պատճառ: Չի ուզում անել, չի ձգտում»:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Աղքատությունը, էլի եմ ասում, հոգեկան վիճակ է»:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Դա աշխատասիրությունից է գալիս: Եթե աշխատասեր եղար, աղքատ չես լինի»:

Այսպիսի կարծիքները նաև տարածված են Հայաստանում, ոչ միայն հետազոտության մասնակիցների խոսույթներում, նման հայտարարություններ անում են նաև տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ և պնդում, որ աղքատության հաղթահարման, բարեկեցության ապահովման առաջնային պայմանը սեփական ջանքն է:*«Ասում եմ՝ աղքատությունը մեր գլուխներում է: Ես սա ասում եմ որպես մի մարդ, որ այդ ամբողջ ճամփան ծայրից ծայր անցել է: Եվ սա ասում է մի մարդ, որը 1991 թվականին, երբ Երևանի պետական համալսարանի ուսանող է դարձել, իր ընտանիքն ի վիճակի չի եղել իր ուսման վարձը վճարի: Եվ ես ասում եմ՝ այո՛, աղքատությունը*

մեր գլուխներում է, և ես սա ասում եմ որպես մի մարդ, որ իմ գլխում հաղթահարել եմ[27]»:

ՀՀ վարչապետ, Նիկոլ Փաշինյան

27 | ՀՀ վարչապետ. (2019). Վարչապետ Նիկոլ Փաշինյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Ազգային ժողովում. վերցվել է՝ https://shorturl.at/mwH23

Ի տարբերություն մեղադրանքների հեռանկարի՝ մենք աղքատությունը սահմանում ենք որպես սոցիալական անարդարություն, համակարգային խնդիր, այլ ոչ թե անհատական ձախողման հետևանք: Աղքատության պատասխանատվությունն այն պարագայում, երբ Հայաստանում աղքատության վերին գծի հաշվարկներով բնակչության 43,8%-ը, այսինքն՝ գրեթե կեսը աղքատ է, ոչ թե անհատի, այլ հենց համակարգային խնդիր է: Իսկ այս համատեքստում հատկապես անհանգստացնող է դառնում այն, որ աղքատության մեջ գտնվող անձանց և իրենց ընտանիքների կարիքները հոգալու համար նախատեսված սոցիալական աջակցության ծրագրերի նկատմամբ հետազոտության մասնակիցների շրջանում տարածված է խիստ բացասական վերաբերմունք:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Աղքատությունը վերացնելու լավագույն միջոցը բոլոր աղքատներին մի տեղ հավաքելն ու վերացնելն է»:

Այս համատեքստում ակնհայտ է, որ հայաստանյան բնակչությունը, իշխանությունների ներկայացուցիչները, ինչպես նաև մեր հետազոտության մասնակիցները ներքնայնացրել և վերարտադրում են նորազատականության (նեոլիբերալիզմի) գաղափարախոսությունն ու համոզմունքները: Կապիտալիզմը և ազատ շուկան տանում են շահագործման և չքավորության, մրցակցությունը և աշխատանքային վատ պայմանները հանգեցնում են գործազրկության և աղքատության: Հարուստները հարստանում են, աղքատները՝ աղքատանում: Սակայն նորազատական գաղափարախոսության համատեքստում աղքատները սկսում են իրենք իրենց մեղադրել սեփական անհաջողությունների համար, նույնիսկ

եթե հանգամանքները փոխելու համար շատ քիչ բան կարող են/էին անել, մինչդեռ հարուստները համոզված են, որ իրենց ձեռք բերած հարստությունն իրենց անհատական ջանքի արդյունքն է, իրենց արժանիքն է[28]:

Համաձայն Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների՝ 2020 թվականից աշխարհում ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվն ավելացել է գրեթե 70 միլիոնով՝ հասնելով առավել քան 700 միլիոնի[29]: 2023 թվականին ծայրահեղ աղքատ[30] է համարվում երկրագնդի բնակչության 9,3%-ը[31]: Այսպես՝ աշխարհում առավել քան 700 միլիոն մարդու համար ծայրահեղ աղքատությունը ընդգրկուն հանգամանքների և գործոնների արդյունք է, ինչն էլ հաճախ արդյունք է աղքատության շղթայական բնույթի, որը նրանք ինքնուրույն հազիվ թե կարողանան կոտրել: Շատերն այս ցիկլը ժառանգել են իրենց ծնողներից, շատերը դա կփոխանցեն իրենց երեխաներին[32]:

Աղքատության մասին թվային չափումներով խոսելը, սակայն, երևույթի, աղքատ ապրող մարդկանց կենսակերպի մասին շատ քիչ բան է ասում իրականում: Աղքատության հիմնախնդրի դեմ պայքարի համար անհրաժեշտ է, որ այն դիտարկենք տարբեր կողմերից և մոտեցումներում դնենք որոշակի տարբերակումներ: Այսպես՝ հանկարծահաս աղքատության[33] մոտեցումները պետք է տարբերակել միշտ աղքատ *(always poor)* բնակիչների և ընտանիքների համար աղքատության հաղթահարման մշակվող գործողություններից, որոնք մշտապես աղքատ են, և այս աղքատությունը փոխանցվում է սերնդեսերունդ: Սովորական աղքատ *(usually poor)* մարդիկ կյանքի ինչ-որ փուլում ունենում են որոշակի եկամուտ, օրինակ՝ բերքահավաքից կամ ինչ-որ աշխատանքի դիմաց վճարվելիս, իսկ մշտապես աղքատ մարդիկ միշտ ապրում են աղքատության շեմից ցածր մակարդակում, նույնիսկ եթե բերքահավաքից կամ աշխատանքի հնարավորու-

28 | Մոնբիո, Ջ. (2016). *Նեոլիբերալիզմ՝ մեր բոլոր խնդիրների հիմքում ընկած գաղափարախոսությունը.* (թարգմ.՝ Գ. Մելքոմ Մելքոմյան), diskurs.am. վերցվել է՝ http://diskurs.am/2016/07/840/

29 | The World Bank. (2023). Poverty. Overview. Retrieved from: https://www.worldbank.org /en/topic/poverty/overview

30 | Ծայրահեղ աղքատ են համարվում այն մարդիկ, որոնք ապրում են մեկ անձի համար օրական 2,15 ԱՄՆ դոլարից պակաս գումարով (սահմանումը՝ ըստ Համաշխարհային բանկի):

31 | Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ 2019 թվականին, այսինքն՝ մինչև 2020-ին բռնկված կորոնավիրուսային համաճարակը, ծայրահեղ աղքատ է համարվել աշխարհի բնակչության 8,4%-ը. worldbank.org. վերցվել է՝ https://www.worldbank.org/en/topic/poverty/overview

32 | Concern Worldwide. (2023). Explainer: The cycle of poverty, and how we break it. Retrieved from: https://www.concern.net/news/cycle-of-poverty

33 | Հանկարծահաս աղքատությունը (occasional poverty) ենթադրում է, որ մարդը կամ տնային տնտեսությունը հիմնականում վարում է այնպիսի կենսակերպ, որը բարձր է աղքատության գծից, սակայն ինչ-որ անսպասելի իրադարձության հետևանքով (օր.՝ բնական աղետ) կարող է այս խմբի մարդկանց դարձնել աղքատության նկատմամբ խոցելի: Confronting Poverty (2023), Retrieved from: https://confrontingpoverty.org/poverty-discussion-guide/what-is-the-moral-ground-to-view-poverty/

թյուններից հետո նրանց եկամուտներում որոշակի դրական տատանումներ են լինում[34]:

Հետազոտության մասնակիցները ևս աղքատության մասին խոսելիս առանձնացնում են այս տարբերությունները և հաճախ խոսում են նաև մշտական աղքատության կամ շղթայական աղքատության երևույթների մասին:

34 | Նույն տեղում:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Ես կարծում եմ, որ եթե աղքատ է, ուրեմն ի սկզբանե աղքատ է եղել, ու նույն ձևով շարունակվել է: Ոչ թե ինչ-որ մեկը նորմալ պայմաններում էր ու հանկարծակի աղքատացավ»:

Աղքատության հաղթահարումը և խոչընդոտները

Համաձայն ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի՝ ՀՀ Կառավարությունը նպատակադրել է մինչև 2026 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը: Կառավարության ծրագրում աղքատության կրճատման և բարեկեցության աճի ավելացման հիմնական շարժիչ ուժը ՀՀ Կառավարությունը տեսնում է բարձր տնտեսական աճը և համապատասխանաբար սահմանում է, որ 2026 թվականին աղքատությունը կրկնակի կրճատելու և գործազրկության մակարդակը 10%-ից նվազեցնելու համար Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է տարեկան ՀՆԱ-ի 7%-ից ավելի աճ[35]: ՀՆԱ-ի 7%-ից ավելի աճի ապահովման պայմաններում էականորեն կբարձրանա մարդկանց կյանքի որակը, կաճեն եկամուտները, կավելանան աշխատատեղերը, կկրճատվի աղքատության մակարդակը, որոնք սահմանվում են նաև որպես Կառավարության տնտեսական զարգացման նպատակներ[36]: Ըստ ՀՀ Կառավարության 2021-

35 | ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր. վերցվել է՝ https://www.gov.am/files/docs/4586.pdf

36 | Նույն տեղում:

2026 թվականների ծրագրի «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» բաժնի՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվելու է ըստ ոլորտի առկա խնդիրներին համալիր արձագանքող ռազմավարական փաստաթղթի, որի նպատակներից է նաև ծայրահեղ աղքատության վերացումը՝ ի թիվս նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերի հավասարեցմանը համապատասխանաբար պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին և նվազագույն աշխատավարձի սահմանումը 85 000 դրամ[37]: Ըստ Կառավարության ծրագրի՝ սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Ըստ այդմ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի նոր հայեցակարգի համաձայն՝ պետությունը նախատեսում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների ու հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են[38]:

37 | Նույն տեղում:

38 | ՀՀ ԱՍՀՆ. (2023). Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգ:

Հետազոտության մասնակիցների գնահատմամբ՝ աղքատության հաղթահարումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց ուղղությամբ պետությունը և այլ կառույցներ պետք է համապատասխան ջանքեր ներդնեն: Մասնավորապես հետազոտության մասնակիցները աղքատության հաղթահարման գործում ամենաշատը տեսնում և կարևորում են հենց պետության դերը: Այս հարցում պետությունը պետք է համապատասխան տնտեսական բարեփոխումներ անցկացնի, ստեղծի աշխատանքային հնարավորություններ, ներդնի աշխատատեղեր և իրականացնի համապատասխան աջակցության ծրագրեր՝ հիմնված կարիքների վրա: Հետազոտության մասնակիցները հատկապես կարևորում են պետության կողմից գործարանների, արտադրամասերի ստեղծման և շահագործման կարևորությունը, ինչը, մի կողմից, կարող է աշխատատեղեր ապահովել քաղաքացիների համար, մյուս կողմից՝ նրանց կողմից դիտարկվել որպես կայունության, կայուն բարեկեցության ապահովման երաշխիք:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Պետությունը պետք է գործարաններով օգնի, ժողովուրդը աշխատատեղ ունենա, գնա աշխատի»:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Ծիրակի մարզ

«Պետությունը պիտի մտածի, որ գոնե էս գյուղերում ինչ-որ տնտեսություն դնի, որ ժողովուրդն աշխատի»:

Պետության դերը և ազդեցությունը հետազոտության մասնակիցները նաև կարևորում են կոնկրետ ծրագրերի ներդրման և իրականացման, հնարավորությունների ստեղծման և ապահովման հարցերում: Նրանք մասնավորապես շեշտադրում են պետության կողմից կոնկրետ ոլորտներում ներդրումները, օրինակ՝ մատչելի վարկավորումը, սուբսիդիաների տրամադրումը, տարբեր գործարարների համար հարկային արտոնությունների սահմանումը, որոնք կստեղծեն աշխատատեղեր և այլն:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Պետությունը որպեսզի աղքատությունը կրճատի, կարա մարզերի ղեկավարներին հանձնարարականներ տա, օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում: Եթե որևէ գյուղում գնանք, ուզենք մի պատ շարել, 5 հոգի կասի՝ էս իմ հողն է: Բայց մշակելու ժամանակ բոլորը կողքի են քաշվում՝ ձեռք չի տալիս, եկամուտ չկա: Բնականաբար, որ մշակես, բերք կստանաս, ինչ-որ ձևով աղքատությունդ կհաղթահարես: Համատարած պետք է ստիպի [պետությունը], որ մշակեն իրենց հողերը»:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Պետությունը կարա նաև էժան վարկեր տրամադրի»:

30-44 տարեկան տղամարդ, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Եթե ինչ-որ մեկը կարող է բիզնես դնել, գործարան սարքել, պետք է աջակցեն՝ մի երկու տարի հարկերից ազատեն»:

Հետազոտության մասնակիցները հաճախ իրենց քննարկումներում վերադառնում են սոցիալական աջակցության տարբեր ծրագրերին, քննարկում և իրենց դիտարկումներն են անում դրանց արդյունավետության շուրջ, ինչպես նաև տալիս են գնահատականներ աղքատության հաղթահարման կամ աղքատության խորացման գործոններին: Հետազոտությանը մասնակցածների մեծ մասի կարծիքով ներկայում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը, ըստ էության, չեն նպաստում իրենց նպատակի իրագործմանը՝ աղքատության վերացմանը, ընդհակառակը՝ խորացնում են աղքատությունը, ինչպես նաև մարդկանց դարձնում են կախյալ համակարգից, ինչը խոչընդոտում է, որ վերջիններս ներդնեն իրենց անհատական ջանքերը և դուրս գան աղքատության շղթայից:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Որովհետև շատ-շատերը սովոր են, որ ավելի լավ է չաշխատեն, նպաստ ստանան»:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Եթե ուզում ենք ունենալ մտածող, ձգտող հասարակություն, պետք է էս օդից փողերը իսպառ վերացնել: Մոր ընտանիքի վրա օրինակ բերեմ, որպես աշխատող ընտանիք, որ օգնություն է գալիս, ասում են՝ իրենք աշխատող են, իրենց պետք չի, իսկ էն ընտանիքը, որտեղ հայրը խմող է, մայրը ոչ մի բանով չի զբաղվում, բայց 7 երեխա ունի, բացի երեխա բերելուց, ուրիշ ոչ մի ֆունկցիա, երեխաների հետ էլ կապված, չի կատարում, իրենց ամեն տարի սիրուն-սիրուն օգնություններ, նվերներ են տալիս: Նույնիսկ էդ հագուստը էնքան են հագնում, մինչև կեղտոտվում է, թափում են, չեն էլ մտածում լվանալու մասին: Սպասում են հաջորդ օգնությանը: Ցավոք, ունեմ էդ օրինակները»:

Իրենց դիտարկումներում հետազոտության մասնակիցները քննադատում են նպաստների համակարգը այն հիմնավորմամբ, որ դրանք մարդկանց սովորեցնում են օգնություն ստանալ, այլ ոչ թե աշխատել, հետևաբար չնչին օգնություն ստանալով և միայն այդ աջակցության շնորհիվ մարդը չի կարողանում հաղթահարել իր աղքատությունը:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Ստացվում է, որ նպաստը ժողովրդին փչացնում է: Դա տեղին պետք է լինի: Շատ մարդիկ կան, որ ի վիճակի չեն աշխատելու, իրենց պետք է նպաստ տալ: Իսկ ով աշխատունակ է, ու նպաստ ես տալիս, իրեն փչացնում ես: Ծուլության է բերում»:

Ավելին՝ հետազոտության մասնակիցները աղքատության հաղթահարման, այլ տեսակի սոցիալական աջակցության նպաստների նկատմամբ ունեն ընդգծված բացասական վերաբերմունք: Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ տարբեր տարիների ընթացքում մարդիկ ականատես են եղել, իմացել են, որ բարեկեցիկ ընտանիքները, ոչ աղքատ ընտանիքները տարիներ շարունակ որոշակի կա-

շառքի դիմաց օգտվել են տարբեր աջակցության նպաստներից, ինչպես նաև նման դեպքերով տարբեր տարիների ընթացքում բազմաթիվ քրեական գործեր են եղել, որոնք նաև հանրային հնչեղություն են ստացել: Ըստ այդմ՝ տարածված կարծրատիպ է, որ սովորաբար սոցիալական աջակցության նպաստներից օգտվում են այն մարդիկ, ովքեր դրա կարիքը չունեն: Այդպիսի դեպքերի առնչությամբ Հայաստանում տարբեր տարիներին քննվել են «աղքատության ընտանեկան նպաստի հատկացումներից հափշտակման» տարբեր գործեր, ինչի արդյունքում տարբեր պետական պաշտոնյաներ պատասխանատվության են կանչվել[39]:

Այստեղ հետաքրքիր է դիտարկել, որ հետազոտության մասնակիցներից ոմանք նույնպիսի թերահավատությամբ են վերաբերվում միջազգային կամ հասարակական կառույցների, ինչպես նաև պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերին:

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը ներկայում 46850 է, իսկ սոցիալական նպաստ ստացող ընտանիքներինը՝ 23376[40]: Հետազոտության ընտրանք հանդիսացող համայնքներում ընտանեկան և սոցիալական նպաստ[41] ստացողների թիվը ներկայացված է ստորև բերված աղյուսակում[42]:

Համայնքներ	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը
Ճամբարակ	427	157
Նորատուս	211	33
Արթիկ	1550	421
Մարմաշեն	62	8

Ավելին՝ այստեղ կան նաև շատ ավելի խորքային և զուգորդված խնդիրներ: Ըստ մամուլում արված հրապարակում-

39 | Հետք. (2009). Հափշտակել է *«Աղքատության ընտանեկան նպաստ»-ի հատկացումներից*. վերցվել է՝ https://hetq.am/hy/article/41090

40 | Տվյալները ստացվել են ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղարկված հարցման:

41 | Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տ. անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ Կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից (2021 թ. համար սահմանվել է 28.00 միավոր): Ընտանեկան նպաստի չափը հաշվարկվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող և ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող 18 տ. չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:
Սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տ. անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ Կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից (2021 թ. համար սահմանվել է 28.00 միավոր). վերցվել է՝ https://socservice.am/action/npastner

42 | Տվյալները ստացվել են ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղարկված հարցման:

ների, ինչպես նաև հետազոտության մասնակիցներ կարծիքների՝ շատ հաճախ ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների անդամներն աշխատում են, սակայն չեն գրանցվում որպես աշխատողներ: Ընդ որում՝ հարկ է նշել, որ հիմնականում աշխատողներն իրենք են առաջարկում աշխատել առանց պայմանագրի և առանց պետական գրանցման, որպեսզի չզրկվեն պետական աջակցությունից: Արդյունքում գործատուն հարկեր չի վճարում պետությանը, իսկ ընտանեկան նպաստ ստացող քաղաքացին չի զրկվում նպաստից: Սակայն գործատուն, երկարատև կտրվածքով հարկեր չվճարելով, պետությանը պատճառում է վնաս, իսկ աշխատողը զրկվում է աշխատանքային ստաժից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ամփոփելով ընտանիքի անապահովության գնահատման ներկայիս համակարգը, «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի» իր նոր հայեցակագում առանձնացրել է գործող համակարգի հիմնախնդիրները, որոնք նաև հրամայական են դարձել նոր հայեցակարգի մշակման համար: Այսպես՝ գործող համակարգի հիմնական խնդիրներից են *ցածր հասցեականությունը* (թե՛ աղքատ, թե՛ ծայրահեղ աղքատ բնակչության, այդ թվում՝ երեխաների ներառման տեսանկյունից), *ցածր արդյունավետությունը,* այդ թվում՝ աղքատության կրճատման տեսանկյունից (**ծայրահեղ աղքատ բնակչության 37 %-ը նպաստառու լինելու պայմաններում մնացել է ծայրահեղ աղքատ**), *ներառման սխալների մեծ հավանականությունը, աշխատանքը խթանելու մեխանիզմների բացակայությունը, կարիքներին համալիր արձագանքման համակարգի բացակայությունը, կոռուպցիոն տեսանկյունից բարձր ռիսկայնության վարչարարության առկայությունը*[43] և այլն:

Հետազոտության մասնակիցները, խոսելով զբաղվածության և աղքատության հարցերի, դրանց փոխկապակցվածության մասին, առանձնացնում են նաև մարդկանց կրթու-

43 | ՀՀ ԱՍՀՆ. (2023). Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգ:

թյան, գիտելիքի, հմտությունների, կարողությունների և հնարավորությունների խնդիրները աղքատության կանխարգելման և հաղթահարման համար անհրաժեշտ արդյունավետ լուծումներ տալու տեսանկյունից: Այսինքն՝ հետազոտության մասնակիցները, մի կողմից, սահմանում են, որ կրթության պակասը, կոնկրետ ոլորտներում գիտելիքի և հմտությունների բացակայությունը, ֆինանսական անգրագիտությունը, բյուջեի տնօրինման հմտությունների պակասը աղքատությանը նպաստող գործոններ են, մյուս կողմից էլ կարծում են, որ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է ներդրումներ անել կրթական ոլորտում, ընդ որում՝ այնպես կազմակերպել կրթությունը, որ այն համապատասխանի մարդկանց կարողություններին և նպաստի իրական զբաղվածությանը:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Եթե կրթություն լինի, սովորեն համալսարանում, աշխատանքը կլինի: Եթե կրթություն չկա, դժվարություն է: Միջնակարգ կրթությամբ չեն վերցնում աշխատանքի, պետք է բարձրագույն ավարտած լինես: Նաև աշխատաքային փորձ ունենաս»:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Կարելի է դասընթացներ կազմակերպել այգեգործների համար, որ իմանան՝ իրենց այգիներն ինչպես մշակեն»:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Դպրոցում մի օղակ լինի, որը երեխային ուղղություն կտա, պրակտիկորեն կփորձի երեխան՝ արդյոք իրեն հյուսնի գործը դուր է գալիս, թե ոչ»:

Ավելին՝ հետազոտության մասնակիցները զբաղվածության և աղքատության փոխհարաբերությունների մասին իրենց դիտարկումներում շեշտադրում են, որ կրթության, գիտելիքի և հմտությունների պակասը այն հիմնական գործոններից է, որը բերում է աղքատության: Թեև հանրակրթու-

թյունը հանրապետությունում անվճար է, սակայն թե՛ դպրոց հաճախելը, թե՛ հիմնական կրթության շարունակությունը, ըստ հետազոտության մասնակիցների, բավականին թանկ և ռեսուրսատար են, քանի որ կրթական հաստատություններ հաճախելու համար ևս անհրաժեշտ են ռեսուրսներ (հագուստ, կոշիկ, պայուսակ, գրենական պարագաներ, գրքեր և այլն), որոնք նաև ձևակերպվում են որպես սոցիալական արդարության խնդիրներ:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Սաղ չունենալուց է: Մի քանի օր հետո երեխեքին դասի պիտի ուղարկենք: Յուբկեքի գները տվել հելել են: Մարդ որ չկարողանա առնել, երեխեն գնա դպրոց, մյուսների հագածը տեսնի, արդեն սթրեսի մեջ կընկնի»:

Կրթական ծրագրերի, վերապատրաստումների մասին խոսելիս հետազոտության մասնակիցները կարևորում են այս ծրագրերի շարունակականության հարցը: Ավելին, ըստ վերջիններիս դիտարկումների, կրթական, վերապատրաստման, կարողությունների և հմտությունների զարգացման ծրագրերը պետք է ունենան ոչ թե մեկանգամյա, այլ պարբերական բնույթ, լինեն շարունակական, ինչպես նաև հիմնվեն մարդկանց կարիքների ու հնարավորությունների վրա: Այսպիսի ծրագրերը կարող են լինել խելացի գյուղատնտեսության, այգիների մշակման ժամանակակից մոտեցումների, անասնապահության արդյունավետության մասին, կամ կզարգացնեն մարդկանց կարողությունները: Հակառակ սրա՝ քննադատության են ենթարկվում այնպիսի ծրագրերը, որոնք ընդհանրապես հաշվի չեն առնում մարդկանց կարիքները, հմտություններն ու հնարավորությունները, այլ իրականացնում են «պարզապես իրականացնելու համար», օրինակ, «ծրագրավորման դասընթացներ են կազմակերպում մարդկանց համար, ովքեր չունեն համակարգչային տարրական գրագիտություն»:

Հետազոտության մասնակիցները նաև ուղղակի կապ են տեսնում առողջապահության և աղքատության միջև: Հայաստանում նախկինում իրականացված հետազոտությունները փաստում են, որ առողջապահությանն առնչվող զրկանքները շատ մեծ դեր ունեն բազմաչափ աղքատության ձևավորման և ընդհանուր աղքատության մեջ զրկանքների չափը պայմանավորելու հարցում: Ընդհանուր աղքատության մեջ առողջապահության ոլորտում առկա զրկանքների ծավալը 87.8%[44] է: Այսինքն՝ աղքատ բնակչության համար առողջապահությունը հիմնարար զրկանք է: Որակական հարցումները նույնպես փաստում են, որ առողջապահությանն առնչվող զրկանքները ոչ միայն աղքատության բնութագրական երևույթ են, այլև աղքատությունը վերարտադրող և նույնիսկ աղքատության մշակույթը խորացնող պատճառ[45]: Անհավասարությունն արտահայտվում է նաև այն բանում, որ ոչ միայն աղքատների կյանքի տևողությունն է ավելի կարճ, այլև առողջապահական տեսանկյունից նրանց կյանքի որակն է շատ ավելի ցածր:

44 | Խալաթյան, Մ., Մանուսյան, Ա., Մարգարյան, Ն. (2023). *Քննելով հանրային մտահոգությունների բազմազանությունը. սոցիալականը, խաղաղությունը, տարածաշրջանը,* Երևան:

45 | Թադևոսյան, Ա. (2018). *Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում (Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի դիտարկման հիման վրա),* Երևան:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Մարդկանց 80%-ը հիվանդ է: Բա մարդիկ ի՞նչ են ուտում, որ առողջ լինեն: Սպրեդ [խմբ.՝ կարագի փոխարինիչ]: Չի կարողանում նորմալ սնունդ առնի, պարզ չի՞, որ պիտի հիվանդանա: Հիվանդանում է, չի կարողանում աշխատել, մեկը պիտի կողքից տա, որ կարողանա ապրել: Ապրել է ուզում: Էսօրվա ջահելության մեծամասնությունը առողջական խնդիրներ ունի՝ չհաշված իրենց ծնողները»:

30-44 տարեկան կին, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Որովհետև, որ հիվանդանում են, սոցիալական վիճակը չի ներում, որ անմիջապես բժշկի գնան: Մինչև դանակը ոսկորին չհասնի, բժշկի չեն գնում, կանխարգելիչ միջոցառումներ չեն անում»:

Հետազոտության մասնակիցները նաև որպես աղքատության պատճառ առանձնացնում են համայնքների խոշորացման բարեփոխումը: Ըստ բարեփոխման անհրաժեշտության հիմնավորումների և նպատակների՝ համայնքների խոշորացումը պետք է բերեր տնտեսական և սոցիալական դրական փոփոխություններ, որոնք հետազոտության մասնակիցները ոչ միայն չեն տեսնում, այլև իրենց խոսքում պարբերաբար անդրադառնում են դրա բացասական հետևանքներին աղքատության, աշխատատեղերի կրճատման համատեքստում:

30-44 տարեկան կին, Արթիկ, Ծիրակի մարզ

«Գյուղապետարանները փակեցին, բոլորը տեղափոխեցին մի տեղ: Այդքան աշխատատեղ կրճատվեց: Էս խոշորացումը շատ աշխատատեղերի կրճատման պատճառ դարձավ, որն, իմ կարծիքով, ճիշտ չէր»:

Աղքատության պատճառների մասին խոսելիս հետազոտության մասնակիցները նաև անդրադառնում են չլուծված հակամարտություններին, առանձնացնում են պատերազմը՝ որպես աղքատացնող գործոն: Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքով Հայաստանում բազմաթիվ ընտանիքներ են մարդկային կորուստներ ունեցել: Շատ ընտանիքներում պատերազմում զոհվել են ընտանիքը «կերակրող», հիմնական զբաղվածություն ունեցող անդամները: Շատերը պատերազմում ստացել են տարբեր տեսակի վնասվածքներ, ձեռք են բերել հաշմանդամություն, ինչը ևս բացասաբար է ազդել վերջիններիս՝ աշխատաշուկա վերադառնալու, եկամուտ ստանալու վրա:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Վերջերս արդեն պատերազմն է ազդում ինչ-որ չափով աղքատության մակարդակի վրա: Օրինակ՝ ընտանիքը աշխատուժ է կորցնում, կինն էլ հաշմանդամ է, ի վիճակի չէ աշխատելու, բնականաբար այդ ընտանիքը գնում է դեպի աղքատացում, ավելի դժվար է կարիքները հոգում»:

Հետազոտության մասնակիցները, խոսելով աղքատության մասին, փաստում են, որ աղքատությունը նաև տեսք ունի, և թե՛ գյուղական, թե՛ քաղաքային համայնքներում զբոսնելիս էլ կարելի է միանգամից կռահել, թե որ բնակարանում ապրողն է աղքատ: Նրանց դիտարկմամբ՝ սոցիալական անհավասարությունը, աղքատությունը շատ պատկերավոր կարելի է տեսնել յուրաքանչյուր համայնքում:

Հետաքրքրական է նկատելը, որ հետազոտության մասնակիցները նաև փորձում են ինչ-որ առումներով «ռոմանտիզացնել» աղքատությունը, աղքատության մեջ նաև ինչ-որ լուսավոր կետեր գտնել՝ տալով *«աղքատի սիրտն ավելի լայն է», «աղքատ մարդիկ ավելի բարի են», «չկա չարիք առանց բարիքի»* և այլ ձևակերպումներ:

«Զբաղված աղքատություն»

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»[46] ՀՀ Կառավարությունը որպես աղքատության հիմնական պատճառ նշում է գործազրկությունը, սակայն նաև արձանագրում է, որ ՀՀ-ում ծայրահեղ աղքատ է զբաղված բնակչության ավելի քան 1/5-ը, և աղքատ՝ զբաղված բնակչության 45-47%-ը[47]: Տարբեր կառավարություններ և հետազոտողներ զբաղվածության խթանումն են տեսնում որպես աղքատության և ծայրահեղ աղքատության հաղթահարման կարևորագույն նախապայման: Այսօր էլ ՀՀ Կառավարությունը ծայրահեղ աղքատության հաղթահարման կարևորագույն սկզբունք է համարում զբաղվածության ռազմավարության իրականացումը, *«որովհետև աշխատանքի միջոցով է հնարավոր մարդուն տալ տեսլական, ոչ թե անընդհատ սոցիալական աջակցություն տալ[48]»:*

46 | Ընդունվել է 2003 թվականին:

47 | Սահակյան, Մ., Կարապետյան, Լ. (2021). *Աշխատանք և սոցիալական արդարություն: Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում.* Friedrich Ebert Stiftung. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/17944-20210722.pdf.

48 | Բաբայան, Ն. (2023, մարտ 20). *Նարեկ Մկրտչյան. «2026 թվականին Հայաստանում ծայրահեղ աղքատ քաղաքացի չպիտի լինի».* Առավոտ. վերցվել է՝ https://www.aravot.am/2023/03/20/1329943/

Այսպես՝ հետազոտության մասնակիցներից ոմանք ևս ունեն այն համոզումը, որ *«աշխատող մարդը չի կարող աղքատ լինել»:*

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Աշխատող մարդը երբեք չի կարող աղքատ լինել: Աշխատող մարդը միշտ նաև հոգով է հարուստ»:

Այս ամենին զուգահեռ հետազոտության մասնակիցները նաև նշում են այնպիսի պայմաններ, որոնց պարագայում հնարավոր է, որ մարդիկ ունենան զբաղվածություն, սակայն լինեն աղքատ: Որպես «զբաղված աղքատության» հնարավոր պատճառներ են առանձնացնում.

- աշխատավարձերի, նվազագույն աշխատավարձի ցածր լինելը,
- համայնքների անհամաչափ զարգացումը,
- ընտանիքում անչափահաս անդամների առկայությունը,
- բազմազավակ ընտանիքները,
- ընտանիքում հաշմանդամություն ունեցող անդամի առկայությունը,
- չգրանցված աշխատող լինելը,
- գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելը,
- ֆինանսական անգրագիտությունը,
- ալոկոհոլից, թմրանյութերից, խաղերից կախվածությունը

և այլն:

Հետազոտության մասնակիցներն առաջին հերթին առանձնացնում և շեշտադրում են այն հանգամանքը, որ Հայաստանում աշխատավարձերը ցածր են, և ցածր աշխատավարձով աշխատանք ունենալը դեռևս մարդուն չի հանում աղքատությունից:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Երկու բարձրագույն դիպլոմով գնում ես, 80 հազար դրամ աշխատավարձ ես ստանում»:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Աշխատում է, աշխատավարձը ցածր է, տան միակ աշխատողն է, չի հասցնում: Կամ ունի երեք անչափահաս երեխա»:

Հետաքրքիր է նկատել, որ մարդիկ, հատկապես գյուղական համայնքներում, կարևորություն տալիս են «պետական աշխատանք» ունենալուն, որն ապահովում է մշտական եկամուտ, կայունություն և կարող է մարդկանց փրկել աղքատության ճիրաններից: Ընդ որում՝ պետական աշխատանք ասելիս հիմնականում հետազոտության մասնակիցները նկատի ունեն գրանցված աշխատանքը՝ անկախ ոլորտից: Օրինակ՝ խանութում աշխատելը և գրանցված աշխատող լինելը հետազոտության մասնակիցներից ոմանք դիտարկում են որպես պետական աշխատանք:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Մեր հարևանի աղջիկը 4 տարի առաջ էր ավարտել, հիմա նոր Գավառից հրավիրել են կրպակում աշխատելու՝ պետական»:

Եվ հակառակը, ինքնազբաղված լինելը, որոշակի տնտեսական գործունեություն իրականացնելը, որը եկամուտ է բերում, չեն համարվում աշխատանք, և հետազոտության մասնակիցները դրանք չեն համարում զբաղվածություն:

Այս համատեքստում կարևորվում է նաև համայնքային տնտեսության դիվերսիֆիկացումը, որպեսզի աշխատավայրը չլինի միայն խանութը կամ ինչ-որ մասնավոր բիզնես:

30-44 տարեկան կին, Արթիկ, Շիրակի մարզ

«Գործարանների կարիք կա: Ամբողջ Արթիկում մենակ խանութներ են, որտեղ 50 հազար դրամ են վճարում: Մարդիկ ո՞նց ապրեն: Աշխատատեղ չկա: Էդ դպրոց-մանկապարտեզներն էլ շատ քիչ են, որ բոլորը աշխատեն»:

Անչափահաս անդամի, բազմազավակության պայմաններում ավելի մեծանում է ընտանիքների խոցելիությունը աղքատության նկատմամբ: Այս պայմանն ուղիղ համեմատական է նաև ընտանիքում զբաղված անդամների թվին, ուստի հետազոտության մասնակիցները կարծում են, որ բազմազավակ, անչափահաս անդամներ ունեցող ընտանիքներում մեկ զբաղված չափահասի առկայությունը աղքատությունը պայմանավորող էական գործոն կարող է լինել:

Աղքատությունը պայմանավորող գործոններից մեկն էլ, ըստ հետազոտության մասնակիցների, գյուղատնտեսական գործունեությունն է և գյուղատնտեսությունը որպես հիմնական եկամտի աղբյուր ունենալը: Այսպես՝ գյուղատնտեսական ապրանքների գինն էժան է ներդրած ջանքի համեմատ: Ճիշտ է, մի կողմից՝ հետազոտության մասնակիցները նշում են, որ գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ զբաղվելը, եթե ապրում ես գյուղական համայնքում, կարող է էական լինել աղքատության կրճատման համար, որովհետև դրանց միջոցով կարող ես հոգալ առաջնային՝ կենսական կարիքները, սակայն, մյուս կողմից, արձանագրում են, որ սրանք թեև կարևոր, սակայն աղքատությունից խուսափելու ոչ բավարար պայմաններ են: Ավելին՝ հետազոտության գյուղական համայնքների մասնակիցները նաև շեշտադրում են, որ գյուղատնտեսական գործունեությունը, անասնապահությունը թեև հնարավորություն են տալիս «ունենալու օրվա հաց», սակայն սեզոնային են. ամռանը մի քիչ ավելի լավ է մարդկանց դրությունը, քան ձմռանը: Ձմռանը ծախսերի մեջ ավելանում են նաև կոմունալ վճարները, ինչն առավել խոցելի է դարձնում մարդկանց, որովհետև դրանք շատ թանկ են, և շատերը չեն կարողանում վճարել անգամ հոսանքի ու գազի համար:

Ավելին՝ գյուղատնտեսությունը նպաստում է աղքատության վերարտադրմանը տարեցների շրջանում, քանի որ

գյուղատնտեսությամբ զբաղվելը աշխատանքային ստաժ չի համարվում:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Մի բան էլ կա: Հիմա ժողովուրդը թոշակ է ստանում առաջվա կոլխոզի ժամանակների աշխատածի հիման վրա: Էդ սերունդը որ էլ չլինի, հիմիկվա էս չաշխատող ժողովուրդը մի 10 տարի հետո թոշակ որտեղի՞ց պիտի ստանա: Մենք ի՞նչ պիտի անենք: Աշխատանք չունենք: Էն ժամանակ, որ դաշտերում աշխատել են, ստաժ են տվել ժողովրդին: Էսօր դաշտում աշխատողը գյուղացին է, ստաժ չունի: Ամբողջ կյանքում դաշտում տանջվում է, ստաժ չի ունենում»:

Բարեկեցության հարցը. բարեկեցիկ քաղաքացու ընկալումները

Զբաղվածության և աղքատության հարցերի քննարկումն ու փոխառնչությունը, զբաղված աղքատների ֆենոմենի ընկալումն ու ուսումնասիրումը կապվում են նաև բարեկեցության գաղափարի քննման հետ: Սոցիալ-տնտեսական դրությունը անմիջականորեն կապվում է բարեկեցության երևույթի սահմանման և ընկալման հետ: Հետազոտության մասնակիցները բարեկեցությունը սահմանում են ամենաբազմազան շերտերով՝ ֆինանսական նվազագույն ապահովվածությունից, հանրային ծառայությունների հասանելիությունից մինչև խաղաղության հաստատման ու անվտանգության ապահովման հարցեր:

Սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի, որը մարդիկ բնութագրում են օր օրի ավելի վատթարացող՝ պայմանավորված գյումթերքի սպառման դժվարություններով, գնաճի խնդիրներով, բարեկեցության մասին խոսելիս առանձնացնում են նվազագույն անհրաժեշտ պայմաններ՝ սննդի, հագուստի առկայություն:

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Բարեկեցությունն այն է, որ դու ունես լավ պայմաններ, նորմալ ուտում ես, ընտանիքիդ անդամները սոված չեն, չեմ ասում՝ եսիմ ոնց, մինիմալ, աշխատանք ունես: Ամեն մեկը իրենից պետք է սկսի, որ բարեկեցիկ դառնա»:

Ոմանք իրենց անհամաձայնությունն են արտահայտում այս դիրքորոշմանը՝ առաջ բերելով նյութական ապահովվածության այլ մակարդակի անհրաժեշտությունը՝ հնարավոր միջին կենսամակարդակի ապահովում, վերանորոգված բնակարանի ու այլ պայմանների առկայություն: Բարեկեցության հարցի քննարկումը միանշանակ կապվում է զբաղվածության հետ. աշխատանքի միջոցով է հնարավոր հասնել բարեկեցիկ կենսապայմանների:

Ուսումնասիրված գյուղական համայնքներում բարեկեցությանն ուղղված պահանջները քննարկման այլ դաշտում են՝ հաշվի առնելով որոշ օրինակներում նվազագույն կենցաղային հարցերի կարգավորման բարդությունները՝ ջրի հասանելիություն, դեղատների բացակայություն, առօրյա ծախսերը հոգալու բարդություններ: Կենցաղային այս տարրական հարցերին լուծումների բացակայությունը մարդկանց հնարավորություն չի տալիս անգամ մտածելու բարեկեցիկ կյանքով ապրելու մասին:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Խմելու ջուր նույնիսկ չունենք տներում: Լվացքի մեքենան նույնիսկ չի միանում, էնքան կամաց է: Ջրագծերը հին ժամանակներից ազբեստից խողովակներով են, որ չի թույլատրվում: Փրկարարները ազբեստ որ տեսնում են, մասկաներով են մոտենում, իսկ մեր մոտ խմելու ջուրը ազբեստով է գնում: Եթե ընդհանուր ջրագծից ջուրն ուժեղացնեն, որ մեզ հասնի, խողովակները կտրաքեն: Ոչ մեկն իր գործը չի անում, հին տարիների ջրագծեր են, որ պիտի փոխվեն»:

Երբ խոսքը ֆինանսական պայմանների առկայության մասին է, պայմանավորված համայնքի կենսապայմաններով, բարեկեցության համար անհրաժեշտ դրամական միջոցների մասին մարդկանց պատկերացումները տարբեր են:

Մարդկանց ձևակերպմամբ՝ բարեկեցության զգացում կարելի է ունենալ, եթե ընտանիքի յուրաքանչյուր անդամ

ունի կայուն աշխատանք և կայուն եկամուտ՝ մոտավորապես 160000-170000 դրամ ամսական աշխատավարձով: Կայունությունը կարևոր հանգամանք է բարեկեցության սահմանման հարցում: Ֆինանսական այս սահմանաչափը մատնանշվում է ընտանիքում մեկից ավելի աշխատող անդամներ ունենալու պարագայում:

Ֆինանսական ապահովվածության տարբեր ընկալումներից անդին բարեկեցության մասին պատկերացումները ձևակերպվում են նաև ոչ նյութական արժեքների միջոցով, որոնց շարքում առաջնային են արդարության ու հավասարության գիտակցումն ու առկայությունը: Այս համատեքստում բարեկեցությունը սոցիալական արդարության առկայությունն է:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Իմ կարծիքով՝ միջավայրն ու սոցիալական արդարությունն է բարեկեցությունը: Այսինքն՝ միջավայրը լավ լինի, արդար լինի ու վերջ»:

Արդարությունն այս համատեքստում սահմանվում է որպես հավասար իրավունքներ, հանրային, սոցիալական, առողջապահական ծառայությունների հասանելիություն՝ անկախ սոցիալական վիճակից: Առողջապահական հարցերի կազմակերպումը սոցիալական բարդ պայմաններում բարեկեցության ընկալման հարցում այլ պահանջներ է առաջ բերում:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Եթե ընտանիքում հաշմանդամ կամ հիվանդ մարդ է լինում, էդ 300-400 հազարն էլ չի բավարարում»:

Սակայն որքան էլ առաջնային պահանջ է նյութական ու ֆինանսական ապահովվածությունը բարեկեցիկ քաղաքացի լինելու և զգալու հարցում, կա նաև տեսակետ, որ գումարի առկայության մեջ չէ բարեկեցությունը, գումարը ուղղակի նպաստող գործոն է բարեկեցիկ համարվելու և ապրելու

համար: Այնուամենայնիվ, շրջապատող կենսապայմանները, կյանքի կազմակերպման համայնքային առանձնահատկությունները, ապահովության զգացումը ևս պետք է բավարար լինեն բարեկեցության զգացում ունենալու համար:

30-44 տարեկան տղամարդ, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Որ երեխային տանում ես մանկապարտեզ, արխային ես, տանում ես դպրոց, արխային ես, ինստիտուտում արխային ես: Այ էդ է բարեկեցիկը: Տունը էական չի, կարող է չունենաս էլ, բայց քեզ լավ զգաս»:

Այս համատեքստում նաև արտահայտվում է բարեկեցության վերնյութական լինելու հարցը՝ արտահայտված հետևյալ ձևակերպմամբ.

30-44 տարեկան կին, Ճամբարակ, Գեղարքունիքի մարզ

«Բարեկեցությունը մի բան ավել է, քան ֆինանսական պահանջները բավարարելը: Բարեկեցությունը մի քիչ էլ երազանքների իրականացում է ենթադրում»:

Բարեկեցության հասնելու ճանապարհը անհատական և պետական ջանքերի ներդրման արդյունք է՝ համաձայն հետազոտության մասնակիցների: Անհատական ջանքեր ասելով՝ մարդիկ պատկերացնում են սեփական ներդրումն ու աշխատասիրության արտահայտումը՝ զուգակցված սեփական աշխատանքի և պետության հանդեպ պատասխանատվության զգացումով:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Որևէ քայլ անելուց առաջ չմոռանա պատասխանատվության մասին: Մոռանա սեփական ես-ը, մտածի ընդհանուրի մասին: Այս դեպքում բոլորի համար լավ կլինի: Եթե չենք մոռանում սեփական ես-ը, պատասխանատվությամբ չենք մոտենում, միանշանակ ձախողում է լինում, ու բարեկեցիկ կյանքի մասին խոսելն անիմաստ է»:

«Պետական շահի մասին մտածել, հանրային ու պետական մտածողության զարգացում». սա շատ կարևոր ու ոչ եզակի հնչող տեսակետ է: Պետական մտածողությունն ընկալվում է որպես բարեկեցության գրավական, կարևորվում է ոչ միայն պետության նկատմամբ պահանջատիրությունը, այլև սեփական պարտականությունների ընդունումն ու կատարումը:

30-44 տարեկան տղամարդ, Արթիկ, Շիրակի մարզ

«Ես կարծում եմ, որ մարդը պիտի սիրի իր հայրենիքը ու ոչ միայն պահանջի, ոչ միայն մտածի, որ իրավունքներ ունի, այլ նաև պարտականություն: Շատերն իրենց կյանքում ոչ մի օր չեն աշխատել, իրենց ամբողջ կյանքի ընթացքում մի դրամ բյուջե չեն փոխանցել, բայց ամեն ինչից ուզում են բյուջեի հաշվին օգտվել: Ամեն մեկն իր պարտականությունն անի, ամեն ինչ լավ կլինի»:

Բարեկեցության հասնելու ճանապարհին պետության հետ փոխհարաբերությունների կառուցման հարցում հետազոտության մասնակիցների դիրքորոշումն ավելի վատատեսական է, երբեմն զուսպ՝ գիտակցելով պետության ռեսուրսների սահմանափակությունը, պետության առջև ծառացած անվտանգային հարցերը: Բարեկեցիկ կյանքով Հայաստանում ապրելու հույսը մարդկանց համար աննշմար է, դժվարպատկերացնելի: Աղքատության ծավալները մեծանում են, երկրում սոցիալ-տնտեսական փոփոխությունները իշխանությունների փոփոխության հետևանքով այլևս տեղի չեն ունենում, և ապագայի մասին պատկերացումներն այս հարցի առնչությամբ անորոշ են:

30-44 տարեկան տղամարդ, Մարմաշեն, Շիրակի մարզ

«Ինչ մնում է մեզ աշխատանքով ապահովելուն, բարեկեցություն ապահովելուն, ես չեմ էլ պատկերացնում՝ դա Հայաստանում որ թվին կլինի կամ կլինի, թե չի լինի»:

Անընդհատ քննարկվող տեսակետն այն մասին, որ պետությունը պետք է աջակցի նաև մասնավոր հատվածի համագործակցությամբ աշխատատեղերի ավելացման, կատարելագործման հարցում, բարեկեցիկ պետություն և բարեկեցիկ քաղաքացիներ ունենալու պատկերացումներում ևս արտահայտվում է: Սակայն պետությունն այս պարագայում հետազոտության մասնակիցները դիտարկում են որպես վերահսկող մարմին մասնավոր հատվածի և մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարման ուղղությամբ՝ նպաստելով նաև թափանցիկության ու անաչառության դրսևորմանը մարդկանց զբաղվածության հարցերը կազմակերպելու հարցում:

30-44 տարեկան կին, Նորատուս, Գեղարքունիքի մարզ

«Պետությունը սարքի գործարան ու ժողովրդին ինքը աշխատանքի ընդունի, ոչ թե անհատ գործարարը, որը իր նեղ շրջապատին է հավաքում»:

Ամփոփում

2018 թվականի Թավշյա հեղափոխության հետևանքով իշխանության եկած նոր Կառավարությունը, ի թիվս այլ հրամայականների, առաջնային անելիքների շարքում հայտարարեց աղքատության հաղթահարումը, ծայրահեղ աղքատության վերացումը, սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանվածության ամրապնդումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև արժանապատիվ աշխատավարձով մարդկանց ապահովումը, որը ՀՀ քաղաքացիներին պետք է դարձներ երջանիկ և հպարտ: Սակայն 2020 թվականին բռնկված կորոնավիրուսային համավարակը, Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքով առաջացած հումանիտար և այլ խնդիրները շարունակում են խոչընդոտ լինել պետության սոցիալական գործառույթներն ամբողջությամբ և համապարփակ իրականացնելու համար:

«Աղքատության, զբաղվածության և աշխատանքային իրավունքի հարցերի մասնակցային ուսումնասիրություն. Գեղարքունիքի և Ծիրակի մարզերի օրինակը» հետազոտության մասնակիցները, քննարկելով զբաղվածության և աղքատության հարցերը, հիմնականում առանձնացնում են հետևյալ խնդիրները.

Զբաղվածության ոլորտում այս համայնքների ներկայացուցիչները շարունակում են բախվել այնպիսի խնդիների, ինչպիսիք են աշխատանք փնտրել և գտնելը, աշխատանքի ընդունվելու հավասար հնարավորություններ չունենալը, աշխատանքային պայմանների ոչ բավարար լինելը, խտրական

պրակտիկաները, ինչպես նաև ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումները, մասնավորապես՝ նեպոտիզմը: Հետազոտության մասնակիցները նաև տեսնում և արձանագրում են, որ պետությունն այդ ոլորտում իրականացրել է որոշակի բարեփոխումներ՝ ծրագրեր և օրենսդրական փոփոխություններ, ինչը, սակայն, կարևոր, բայց ոչ բավարար նախապայման է ոլորտի լավարկման համար:

Արժանապատիվ աշխատանքի մասին իրենց դիտարկումներում հետազոտության մասնակիցները հատկապես նշում են աշխատավարձերի ցածր լինելու և դրանց անհամաչափության հանգամանքը, ինչը կարող է մարդկանց չաշխատելու պայման լինել:

Կարևոր արձանագրումներից է նաև, որ Հայաստանում կրթական և զբաղվածության ոլորտներն ասես չեն համապատասխանում. կան թափուր աշխատատեղեր, սակայն չկան այդ աշխատատեղերը լրացնելու համար համապատասխան մասնագետներ, և հակառակը, շատ մասնագետներ դուրս են մնում աշխատաշուկայից: Սա հատկապես ցցուն է գյուղական և փոքր քաղաքային համայնքներում:

Հետազոտության մասնակիցները խոսում են նաև իրավագիտակցության, աշխատանքային իրավունքներին առնչվող գիտելիքի պակասի մասին և տեսնում ու կարևորում են այս ուղղությամբ պետության, այլ կառույցների ներդրումներն ու ջանքերը:

Թեև աղքատության վերին գծի հաշվարկով Հայաստանում աղքատ է բնակչության գրեթե կեսը, աղքատության մասին հիմնականում տարածված է ներքնայնացված բացասական վերաբերմունք: Որոշակի բացասական վերաբերմունք կա նաև աղքատության հաղթահարման նպատակով իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի, այդ ծրագրերի շահառու խմբերի հանդեպ:

Հետազոտության մասնակիցները ամենաշատը կարևորում են պետության դերը թե՛ աղքատության, թե՛ զբաղվածության հարցերի կարգավորման գործում. պետությունն է, որ պետք է իրականացնի ներդրումներ, ստեղծի աշխատատեղեր, տրամադրի հարկային արտոնություններ, կարգավորի աշխատավարձերն ու շուկան, իրականացնի պետության համաչափ զարգացում:

Հետազոտության մասնակիցներն առանձնացնում են այնպիսի գործոններ, որոնք նպաստում են աղքատացմանը, որոշակի խմբերի ներկայացուցիչների դարձնում են առավել խոցելի: Ըստ այդմ՝ աղքատության հետ անմիջապես առնչվում են կրթության, առողջապահության, հանրային ծառայությունների ոլորտները, որոնք պայմանավորում են բազմաչափ աղքատությունը: Ավելին՝ այս ոլորտում ներդրումները դիտարկվում են որպես աղքատության կրճատման և ծայրահեղ աղքատության վերացման կարևորագույն քայլեր:

Չնայած այն հանգամանքին, որ թե՛ Հայաստանը, թե՛ այլ երկրներ զբաղվածությունը համարում են աղքատության հաղթահարման հիմնաքարը, սակայն ամբողջ աշխարհում շարունակվում է տարածված մնալ «զբաղված աղքատություն» երևույթը, երբ աշխատող մարդն աղքատ է: Ըստ հետազոտության մասնակիցների՝ «զբաղված աղքատության» հնարավոր պատճառներ են աշխատավարձի ցածր լինելը, համայնքների անհամաչափ զարգացումը, ընտանիքում անչափահաս անդամների առկայությունը և բազմազավակությունը, ընտանիքում հաշմանդամություն ունեցող անդամի առկայությունը, չգրանցված աշխատող լինելը, ստվերային տնտեսությունը, ֆինանսական անգրագիտությունը, ալկոհոլից, թմրանյութերից, խաղերից կախվածությունը և այլն:

Որքան էլ հիմնարար պահանջ է նյութական ու ֆինանսական ապահովվածությունը բարեկեցիկ քաղաքացի լինելու և զգալու հարցում, միանշանակ չէ այն ընկալումը, որ գումա-

րի առկայության մեջ է բարեկեցությունը, գումարը ուղղակի նպաստող գործոն է բարեկեցիկ համարվելու և ապրելու համար: Այնուամենայնիվ, կենսապայմանները, կյանքի կազմակերպման համայնքային առանձնահատկությունները, ապահովության զգացումը ևս պետք է բավարար լինեն բարեկեցության զգացում ունենալու համար:

Ֆինանսական ապահովվածության տարբեր ընկալումներից անդին բարեկեցության մասին պատկերացումները ձևակերպվում են նաև ոչ նյութական արժեքների միջոցով, որոնց շարքում առաջնային են արդարության ու հավասարության գիտակցումն ու առկայությունը: Այս համատեքստում բարեկեցությունը սոցիալական արդարության առկայությունն է: Արդարությունն այս համատեքստում սահմանվում է որպես հավասար իրավունքներ, հանրային, սոցիալական, առողջապահական ծառայությունների հասանելիություն՝ անկախ սոցիալական վիճակից: Առողջապահական հարցերի կազմակերպումը սոցիալական բարդ պայմաններում բարեկեցության ընկալման հարցում այլ պահանջներ է առաջ բերում:

Բարեկեցության հասնելու ճանապարհին պետության հետ փոխհարաբերությունների կառուցման հարցում հետազոտության մասնակիցների դիրքորոշումն ավելի վատատեսական է, երբեմն զուսպ՝ գիտակցելով պետության ռեսուրսների սահմանափակությունը, պետության առջև ծառացած անվտանգային հարցերը: Բարեկեցիկ կյանքով Հայաստանում ապրելու հույսը մարդկանց համար աննշմար է, դժվարպատկերացնելի: Աղքատության ծավալները մեծանում են, երկրում սոցիալ-տնտեսական փոփոխությունները իշխանությունների փոփոխության հետևանքով այլևս տեղի չեն ունենում, և ապագայի մասին պատկերացումներն այս հարցի առնչությամբ անորոշ են:

Առաջարկություններ

Հետազոտության այս բաժինն ամփոփ ձևով ներկայացնում է զբաղվածության, աղքատության, «զբաղված աղքատության», ինչպես նաև բարեկեցության ապահովման հարցերի շուրջ հետազոտության մասնակիցների հնչեցրած առաջարկությունները:

Պետությունը պետք է համապատասխան գործառույթներ իրականացնի՝ ապահովելու համայնքային առանձնահատկություններով պայմանավորված բարիքների ու ռեսուրսների ճիշտ տնօրինումը և կառավարումը, արտադրական ներուժի իրացումը: Որպես օրինակ նշվում է Սևանում ձկնագործական արտադրության, Արթիկում քարամշակման ոլորտի կազմակերպումը:

Պետությունը պետք է համապատասխան ջանքեր ներդնի համայնքների համաչափ զարգացման ուղղությամբ, տարբեր համայնքներում իրականացնի որոշակի ներդրումներ, որոնք ոչ միայն կբարձրացնեն այդ համայնքների գրավչությունը, այլև կնպաստեն այդ համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Որպես օրինակ նշվում է, որ Գյումրիում մաքսատան բացումը նպաստել է այդ համայնքի զարգացմանը, աշխատատեղերի և ենթակառուցվածքների ստեղծմանը, որոնք բազմապատկող ազդեցություն են ունեցել այդ համայնքում աշխուժության բարձրացման, զբոսաշրջության զարգացման վրա:

Պետությանն առաջարկվում է քարտեզագրել առկա չօգտագործվող ռեսուրսները, մասնավորապես՝ գյուղատնտե-

սական նշանակության հողատարածքները, և կազմակերպել դրանց օգտագործման հարցը ըստ նշանակության:

Պետությանն առաջարկվում է քարտեզագրել հանրապետությունում, մասնավորապես՝ մարզերում առկա մասնագիտական ռեսուրսները և աշխատաշուկան՝ հնարավորինս դրանք համապատասխանեցնելու համար:

Բարձրացնել Միասնական սոցիալական ծառայության և դրա կողմից իրականացվող գործունեության տեսանելիությունը, հասանելիությունը և մատչելիությունը:

Վերանայել սոցիալական աջակցության ծրագրերը, դրանց շահառուներին, մատուցվող ծառայությունները համապատասխանեցնել մարդկանց կարիքներին և կարողություններին, բարձրացնել այդ ծրագրերի և ծառայությունների հասցեականությունը:

Պետությանն առաջարկվում է վերանայել նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակի չափը, դրանք համապատասխանեցնել արժանապատիվ կյանք ունենալու անհրաժեշտ պահանջներին:

Իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ ներքին և արտաքին աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները և դրանք պայմանավորող գործոնները համապարփակ ձևով հասկանալու համար: